ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԳԷՍ ԱՄՍԵԱՅ

ԺԸ· ՏԱՐԻ 1888 ՀՈՒՆԻՍ

ՆԿԱՐԻՉ

ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Ե·

Այդ միջոցներուն հայրս Պօլիս գալով, ութ օրի չափ զբաղուեցաւ նորանով և երբ վազը ինչ տեղաւորուեցինք, մտաբերեցի իմ նկարչին և մանաւանդ նորա այն նկարը, որը արդէն ցայժմ լրացրած պիտի լինէր· նորէն կիւրակի օր մը փերա անցայ· Այս անգամ «Նահնէլեան» բարձրացայ և հինգ րոպէից յետոյ գանուեմ էմ նկարչիս առջևը·

Դրան զանգը երբ քաշեցի, չէ՛ք վրայ յայտնուեցաւ նորէն դեր առաքինինը, որին հարցրի թէ Ռուբէնը տո՞ւնն էր·

— Ձէ պիտեմ, ասաց անհոգութեամբ նա — մի քանիօր է ո՛չ մանելը և ո՛չ էլ ելնելն եմ տեսնում· · · բարձրացէք վեր·

Սրտաբորի եղայ· մի բան ինձ ասում էր որ իմ նկարչիս հետ մի դժբաղդութիւն պիտի պատահած լինէր·

Սենեակի դուռը հրեցի, բայց չը բացուեցաւ. բաղխեցի։

Մի թոյլ ձայն, որը սակայն Ռուբէնի ձայնին չէր նմանում, մրմնջեց.

— Մատէք։

— Բայց փակուած է, դոչեցի ես։

— Հրէ՛ք, միայն սմիռա մ'է արգելքը։

Հրեցի և ներս մտնելուս պէս, քարացած կանգ առի չէմքի վրայ։

Փոքրիկ լուսամուտի առջև, այդ աղքատիկ անկողնոյ մէջ մի հիմնախք էր ընկած, որը ներս մտնելուս պէս իմ կողմը դարձաւ։ Ռուբէնն էր. բայց ո՛րքան փոխուել էին նորա այն փայլուն մեծ աչքերը, սպիտակ դէմքը, այն մազերը...։

Միայն մի չափիկ ուներ հազած և վերմակը մինչև փորը ծածկել էր։

Ձիչ մը արձակեցի և դէպի նորան վազեցի։

Ծպտեց ախթապին, ձեռքը ինձ պարզեց։

— Ուշ էք, բարեկամ, ասաց — զգուէի որ նախ պիտի տեսնեմ քեզ...։

— Բայց այդ ինչ կս եղել, դոչեցի։

— Ոչ ինչ... միմիայն այս բոլորը ընդունակ է քեզ զբաղեցնելու. քեզ, որ չատ ինչուաուրիւններ ես կրել և պիտես ինչեր կարող է արտադրել նա։

— Ուրեմն հիւանդ ես։

— Ո՛չ, ծպտեց ախթութեամբ — բժիշկը այլ ևս դարձ չունի քայքայուած մի մարմնի հետ... նատիր սա աթոռի վրայ։

Նստեցի, սիրտս պատռացել էր. խոկորդս սեղմուած էր։

— Նախիր իմ մօտիկ բարեկամս, խօսեց նա մեղմութեամբ — վեց օր է, որ այս սենեակումը ընկած եմ, ո՛չ ոք եկաւ ինձ մօտ. միայն առաջին օրը կարողացայ ինքնել փոքր ինչ պատար գնելու համար... փող ունի՞ս։

— Այո՛, միմիայն ուղո՞ւմ ես։

— Ո՛չ, ծպտեց նա — ինչ պիտի անեմ... սակայն ո՛չ, ուզեմ տաս դահեկան։

— Ունիմ։

— Խնդրեմ իմիր վար, մտիր «Բօն—Մարչէ» և կամ մի այլ տեղ, չուտո՛վ... գնիր ինձ համար երիկու ամենաարարակ վարձիններ և մի հատ «Բլանշ-ա Արժան» անունով լուսային սպիտակ ներկ...։

— Ինչո՞ւ համար են դրքա։

— Պիտի ասեմ . . . այսօր ինձ մատ կ'ինկիա ամբողջ օրը։

— Եվ կ'ուզես, նոյն իսկ մի քանի օր։

— Շնորհակալ եմ, պճն, գնա և լուտ ճկ . . . իրաքանչիւր րոպէն թանգագին է ինձ համար։

Ես մեքենայօրէն վար իջայ և տաս րոպէից յետոյ վրձինները ու ներկը առած մտնում էի սենեակը։

Այժմ Ռուբէնը եղել էր ու նստել աթոռի վրայ, հագած իր հնամաշ ու վերարկուն. երևում էր նորա ինչպէս ոտները և չորացած կուրծքի տախտակը, իր կիսաբաց կեղտոտ շապկի տակից։ Տալի նորան ներկը և վրձինները. ժպտեց երեսիս, առաւ, բթամատի վրայ փորձեց վրձինների փափկութիւնը և բարակութիւնը, ապա հապճեպ թէ չարժուելով մօտեցաւ իւր անաւարին, հանեց նորա մէջից ներկերի տուփը, բաց արաւ, կանգնեցրեց եռոտանին և դարձաւ ինձ.

— Ցիշո՞ւմ ես, ասայ նա — որ ես քեզ խոստացել եմ իմ նկարներից մէկը ցոյց տալու, սակայն կիսատ է նա, մի փոքրիկ բան է մնացել աւարտելու — փող չունէի վրձին և ներկ առնելու համար . . . հացի համար իսկ չ'ունէի, սակայն այդ ցաւ չէր ինձ, ցաւը ներկ և վրձին չունենալս էր . . . . ինչ և իցէ, այժմ քո շնորհիւը այդ նկարը պիտի վերջացնեմ և դու կը լինես նա, որը նորան միւս բոլոր նկարներից հետ հրապարակ կը հանես, կ'ծախես և եկամուտը երևակայո՞ւմ ես թէ որին պիտի յատկացնես։

— Որին, եթէ ոչ քեզ։

— Ինձ, ժպտաց իր ժպիտով — ես այլ ևս պէտք չ'ունիմ . . . եկամուտը կամենում եմ որ յատկացնես մի քաւորդը քեզ . . . ս', ս', լռիր, մի միջամտաիր. մի կարծեր թէ իմ բարեկամս ես նորա համար, ո՛չ, այլ որովհետև մտադիր եմ այդ դումարը թշուառ դրողներին և գեղարուեստի ճշմարիտ պաշտպաններին տալ և գու մի դրող ես, թշուառ չես, բայց չքաւոր ես . . . ։

Ես գլուխ ծռեցի նորա այդ նուիրական մտադրութեան առաջ։

— Կը մնայ երկք քաւորդը . . . քեզ եմ յանձնում դանել չքաւոր դրողների և նկարիչների ու բաժնել նոցա . . . . այդ մասին պէտք եղած թղթերը կը դտնես անաւակիս մէջ . . .

— Բայց այդ կատակ ես անում, ծիծաղեցի ես։

— Կարելի է կտակ անուանել, քմծիծաղով պատասխանեց նա — խոստանո՞ւմ էք լռելիքս կատարել։

— Այո՛։

— Ես թէև քեզ լաւ եմ ճանաչում, այնու ամենայնիւ խոստանո՞ւմ էք բացի ձեր բաժնից՝ չը դպչիլ միւսներին։

— Այո՛։

— Այժմ, ասաց նա վեհութեամբ — նայինք նկարին։

Եւ նա ձեռքը պարզեց իւր բարձի եռւը, հանեց մի մեծ հրջանակ, դարձրեց, դրեց եռոտանու վրայ և ասաց ինձ։

— Նայիր։

Եւ ես նայում եմ.

Մի փոքրիկ լուսամուտից ներս ընկած ազօտ լոյսով սենեակ է։ պատերի վրայ խոնաւութիւնը և հնութիւնը դրոշմել է իւր նշանները, յատակի վրայ ոչինչ կայ աւելի քան մի բորոտած փսխաթ, դորա վրայ չոքել է մի երիտասարդ՝ պատառոտուն հագուստով՝ մի կարճ եռոտանեայ աթոռ, նորա մազերը կեղտոտ և ցիր ու ցան ընկել են իւր ուսերի և ճակատի վրայ, կուրծքը կիսովին բաց, ցոյց է տալիս նորա մարմինը որը պատրաստած է միմիայն մի հնամաշ վերարկուով։ Նիհար սև մարմինը, նիհար կմախքի նման դէմքը, փոս ընկած աչքերը, չորացած շրթունքները և դեղնած այտերը, բաւական մատներով բռնել է վրձինը և նկարում է, ուշադրութիւնը բոլորովին նորան կեդրոնացրած «ակնապիշ, անձայն» և «խորհուրդը ճակատին» մաքով մոլորուած . . . մատը, փսխաթի վրայ, ներկերի արկից մօտ տեսնվում էր մի կտոր սև հաց, որին տանողը իսկոյն զգում էր որ դա է նորա վերջին պատառը, որի վրայ կարծես փայլում է նկարչի չոր աչքերից կաթած երկու կաթիլ արիւնախառն արտասուքը . . . :

Իսկ վերը — հորիզոնում, դեռ ևս մթան մէջ հալւում փայլում է մի ազօտ լոյս, որոյ մէջ ատուերի նման տեսնվում նոյն նկարիչը՝ պակաս մը դիմին՝ չրջապատուած մի խուռն ամբոխով, որը չդադ պաշտում այդ երիտասարդի . . . անշէջացած մարմինը . . . :

Եւ պատկերի տակ երևում կարմիր սև ու սպիտակ տառերով,

«ՄԵՌԻՐ, ՈՐ ՍԻՐԵՄ ՔԵԶ»։

Լուսթեամբ նայում էի վերացած. ո՛րքան նուրբ, ո՛րքան ազդեցիկ և ո՛րքան էլ խորհրդաւոր էր, ո՛րքան պարզ արտա-

ու ... ՝ր պատնքի այդ տխուր իրականութիւնը ...։

Նա ևս նայում էր իր նկարին մի դառն ժպիտ դէմքի վրայ, վրձինը ձեռքին և ներկը նկարչական պնակի վրայ քսած։

— Դա վերջացել է, այնպէս չէ՞, ասաց խուլ ձայնով։

— Այո՛, կարծում եմ, պատասխանեցի առանց աչքս նկարից պատելու։

— Ո՛չ երբէք ... ես էլ վերջացրած էի համարում. սակայն, նայիր. այդ լոյսը որոյ մէջն է պաշտուող դիակը — քիչ է, որովհետև կարծես ուզում է ասել թէ՝ «նկարիչը դեռ ևս ապրում է՝ միայն նորա ղժացմունքն է որ այդպէս է դուշակել տուել իր ապագայի դրութիւնը» .... այժմ, մի կողմ նսեմր, որ ուղղեմ, լոյսը շատացնեմ և վառեմ դիակի մօտ դրուած աշտանակների մոմերը ... մահուան մահճի մօտ դրուած ճրագները ... որովհետև այդ էր պակասը։

Նստաւ, թաթխեց վրձինը ներկի մէջ ու սահեցրեց կտաւի վրայ։

Ջ.

Ամբողջ տասն և հինգ րոպէի չափ վրձինը խաղացրեց հորիզոնի լոյսի վրայ և նորան մի այնպիսի դրութեան տակ դրաւ, որ լոյսը աւելի մօտ լինիլ թուեց ինձ։ Նկարումէր աչխոյժով. իսկ երբ վրձինը կարմիր ներկին տարաւ՝ տխրութեամբ ինձ նայեց և մրմնաց.

— Ոյժ չը կայ վրաս ... այլ ևս անկարող եմ շարունակել։

Ցետոյ կարմիր ներկով մի քանի րիծ դրեց նկարչի մարմնի — գլխի և ոտքի մօտ դրուած մոմերի ծայրերի վրայ և սակաւ առ սակաւ սկսեց հեռալ, ապա դլուխը թուլութեամբ տարուբերել և երբ ես ձեռքերս պարզում էի նրան բռնելու համար զգալով թէ պիտի ընկնէր՝ յանկարծ ձեռքը թուլութեամբ վար ընկաւ և ինքը դլորուեցաւ դետին ...։

Սոակաւ ճիչ մը արձակելով բռնեցի նորան և տարայ անկողնոյ վրայ, ուր նա մի քանի րոպէ լուռ և աչքերը փակած մնաց, ապա մեղմութեամբ ուշաբերուեցաւ և թոյլ ձայնով ասաց ինձ.

— Վերջացրի պատկերը ... հանդիստ եմ այժմ. ...։

— Բժիչկ բերեմ, շատ հիւանդ ես, ըսի ես։

— Հոգ չէ, մրմռաց նա աչխատելով ժպտիլ — ես վերջացրել էի Քրիստոսի կեանքը, այժմ վերջացրի նաև փառաւոր մահը ...

խնդրեմ տար Եռոտանին անկողին դիմացը դիր, որպես զի աչքս միշտ նորա վրայ լինի . . . լա՛ւ . . . այժմ վերմակով փաթը ինչ ծածկիր ինձ . . . լա՛ւ, չնորհակալ եմ . . . նստիր այժմ մօտս, այս աթոռի վրայ . . . »

Եւ երբ նա նստեցի, նա աչքը սլաքած իւր նկարի վրայ, բռնեց իւր ցուրտ և նիհար ձեռքերով ձեռքս, ակնթարթի մը չափ ժպտեց ինձ և նորէն ակնապիշ իւր նկարին դառնալով՝ հարցրեց . — Լա՞ւ է »

— Հիանալի է »

— Շնորհակալ եմ . . . զգուշեմ որ լաւ է այդ նկարը . . . կարդացիր նկարի անունը . անունն է «Մեռիր, որ սիրեմ քեզ» . . . լաւ անուն չէ՞ . . . ըստ իս, դարձաւ նա ինձ — չատ յարմար անուն է . . . անբնական երևոյթ չէ . . . ամեն որ պատահում է . . . մեր մէջ, երբ տաղանդները մեռնում են՝ միայն այն ժամանակ են սիրելի լինում . . . » Երբ տեղծողն ոչնչանում է, տեղծեալին են ակներով զարդարում . . . երբ կայ նա — արհամարհվում է . մեռաւ — պաշտվում է . բայց ինչը — դիակը . . . տե՛ս, այս նկարը այդ երևոյթն է ցոյց տալիս, յարեց նա նորէն աչքը իւր նկարին սևեռելով — քեզ ևս ղգալի են բարձրիմաց կտորները . . .

— Այո՛, ասացի — ինձ թվում է թէ, հորիզոնի այդ լոյսը, որոյ մէջն է տնփոփուած դիակը՝ աւելի մօտեցել է, իսկ նորա տնարի աշտանակները վառուած, մի տխուր—պայծառ լոյս են արձակում, մի երերուն—փոփոխական լոյս, որ նմանում է մեր ծաղկվրդեան ոգուն . . .

— Փիլիսոփայաբար ես խօսում . . . լոյսը մօտեցրի, որովհետև դորա վրայ նայողը կըզգայ, որ նկարիչը արդէն մեռել է . . . և կը հիանայ . . .

— Նորա տեղծողի վրայ, միջադատեցի ես »

Ցանկարծ նա չարժուեցաւ անկողնի մէջ, աչքերը փայլեցին, դուրս հանեց վերմակի տակից միւս նիհար ձեռքը, պարզեց վեհութեամբ ցուցամատը դէպի նկարի և մռնչեց .

— Այդ իմ կեանքն է, այդ ես եմ, այդ չորաց նիհար, զգդզուած և մի կտոր սև հացի մօտ նկարողը . այդ ես եմ, այդ անօթի, թշուառ նկարիչը . Ես, որ մինչև այժմ դիմադրեցի ամեն թշուառութիւնների, մղեցի անօթութիւնը, վրձինը ձեռքից չը թողի և նորան ձեռքիցս բռնած պիտի մեռնիմ . այո՛, պիտի ոչնչանամ, պիտի առնեն իմ նկարը, զարդարեն նորան

ծագիկներով, հիանան նորա վրայ. «— Ո՛վ է նկարողը» հարցնեն միմեանց — «Բուբէն անունով մի կը» — մի հայ. բայց թէ ինչ դրութեան մէջ է նա, ոչ ոք սիրտ հետաքրքրուէ. պիտի լսեն մանր, մի ժամ, մի րոպէ պիտի «ափսո՜ս» ասեն... իսկ ես, ես ինչ պիտի չանիմ դորանից, փառք, բայց էլ ճրբ, մեռնելո՞ւց յետոյ, դիակս պիտի վայելէ... օ՜հ, Աստուած, ճրբ պիտի ղժայնես մեր ժողովրդին, որ տաղանդները առանց քաջալերութեան՝ կը մեռնին, որ մեռած տաղանդի վրայ հիանալով՝ ամեի ցաւ կը պատճառեն ուրիշ նորածին տաղանդների և ոչինչ օգուտ մեռնողին, որը իւր կենդանութեան ժամանակ անփառք, անոք և թշուառ է ապրել... գիտե՞ս, ես այժմ չեմ ուզում մեռնել, ես կամենում ապրել... բայց ո՛չ, այդ մի և նոյն է... եթէ կենդանի լինիմ և նոյն իսկ Մկոանի չափ ն'ւարեմ՝ դարձեալ անփառք կը մեամ... մա՛հ, մա՛հն է միայն որ փառաւորեցնում է... սակայն թո՛ղեմ ես այդպիսի փառքի վրայ...:

Այս խոսքերը խոսեց նա նախ խիստ յուզուած, ապա կցկտուր և վերջապէս ափիոդորմ ձայնով. ցամաքած աչքերից դըրուեցան մի քանի կաթիլներ, որոնք յուզեցին ինձ.... և ես լաց եղայ...:

Լռեց. — մեռնողի յարդելի լռութիւն, որում մեռնողը սաւառնում է իւր անցեալի և կամ ապագայի իրողութեանց, փառքի կամ թշուառութեանց մէջ, որում նա ննջարկվում է մարդկային բոլոր մուլութեանց. տխրում է, ուրախանում, աքաղաղանում է...:

Շարժուեցաւ և սթափուեց. սոսկալի, ահեղի սթափումն, որ զգացնում է մեռնողին իւր ներկայ դրութիւնը և նա այդ համեմատելով իւր պահ մի առաջուայ յիշատակների հետ՝ դըղրդում է նորա սիրտը և նա պատրաստ է յուսալուս. յոյսը վերածնում է նորա մէջ և նա կամենում է ապրիլ.... գուցէ կ'անցնէին թշուառութիւնք, կը գային պայծառ օրերը.....:

Եւ Բուբէնը հոգեկան այդ դրութեան մէջ ընկաւ. արտասուեց դառնապէս... նա, որին քիչ անգամ էի տեսել դիմել Աստծուն, որովհետև ասում էր միշտ թէ «Աստծուն անպատուել կը նշանակէ ամեն հասարակ բանի համար նորան դիմելը, բան, որի համար փոքր ինչ ինքը աշխատելով՝ կարող է գտնել»... նա, ասում եմ, աչքերը առաստաղին — երկնքին քարձրացրեց և աղիողորմ մեղմիւնով ասաց.

— Վճռդ Աստուած, կեանք տուր ինձ . . . մահ տալը մեծագործութիւն չէ քեզ համար . . . . Մո՛ղ ինձ ապրել, տեսնում ես որ անօգուտ չեմ մարդկութեան . . . Աստուած բարի . . . ինչպէս բարի ես, որ մահ կուտաս . . .

Ցանկարծ խօսքը կիսատ մնաց . . . . քակտվում էր այդ խեղճ մարմինը . . . . ընկաւ անկողնոյ վրայ և սկսեց խածնել վերմակը՝ խռպոտ կերպով մռնչելով.

— Մեռնում եմ. . . և սակայն կ'ուզէի չը մեռնել. . . կ'ուզէի ապրել. . . անարդա՛ր, անգո՛ւթ Աստուած . . . ոճրագո՛րծ Աստուած . . . ինչո՞ւ չես թողնում ապրել, թող այդ վնի նոյն իսկ թշուառութեան մէջ, թող միամիտ անօթի, սակայն ապրեմ. օ՛հ, օդ, օդ . . .

Եւ նուաղեցաւ, ընկաւ մէջքի վրայ, աչքերը փակուեցան, մի քանի խռոչներ արձակեց կոկորդից . . . կատայ նորա վրայ. չրթունքները չարժվում էին, ձեռքերը սառածեց:

— Ների՛ր, Աստուած իմ. . . մրմնջեց՝

Եւ քնացաւ յաւիտեան . . . միայն երկու պղտոր կաթիլներ հոսեցին աչքերից, որոնք վերջիններն էին և որոնք աւելի աբիւն էին քան արտասուք . . . :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՕԼԻՎԻԷ

Ե

Վերջապէս մեծ օրը կ'մօտենար. չորս տարի կար որ Ֆրանսայէն եկած էինք: Իրիկուն մը՝ յանկարծ իմացուցի Կապօնին որ պիտի մեկնէինք:

— Ի՞նչ հարկ կայ մեկնիլ, ըսաւ նա, այս տեղ չատ աղէկ ենք. մնանք:

— Վարանելու ժամը չէ, պատասխանեցի: Վերատին մեր թագաւորն տեղը դտաւ: Կամչատկայի դէմքով մարդիկ տեսայ

որ ապին անդին կ'թափառէին գիւղին մէջ։ Կեանքդ վտանգի մէջ է։

Տարօրինակ բան. այս ողբմալի մարդը կեանքէն չէր ուզեր բաժնուիլ։ Աստուած ինքնապահպանութեան բնազդը կ'թողու խենդութեան։ Կասպօն ոտք ելնելով ինձ հետևեցաւ։

— Ո՞ւր կ'երթանք, հարցուց նա, երբոր կառքը մտանք։

— Ռուսաստան, պատասխանեցի առանց վարանման։

Խորին հառաչ մը հանեց, գլուխը բարձերուն վրայ կոթընցուց և վերստին ընկաւ տեսակ մը թմրութեան մէջ ուսկից պահ մը սթափած էր։

Կառքն որ կ'տանէր մեզ քաջարշաւ ձիերով, կ'գլորէր անդադար երեք օր և երեք գիշեր։ Սնուցիչին մէջ ուտեստ դրած էի որպէս զի չստիպուինք պանդոկներն իջնել։ Ուրականի պէս կ'յառաջանայինք։ Բոլոր ճամբուն վրայ Կասպօն և ոչ հարցում մ'ուղղեց ինձ. ակնարկ մը չձգեց այն դաշտանկարներուն վրայ ուսկից կ'անցնէինք։ Անգամ մը միայն բերանը բացաւ ինձ ընելու սարսռալով.

— Ցուրտ է օդը հոս . . . կ'հասնինք։

Եւ իր վերարկուին մէջ փաթթուեցաւ։

Շուրջ չորրորդ գիշերուան մէջ, մթին օդով՝ կառքը կեցաւ բնակարանի մ'առջև ուր բնաւ լոյս չկար։ Հրաւիրեցի Կասպօն վար իջնելու և առ խարխար առաջնորդեցի դինք։ Երբ մութ սենեկի մը դուռը կ'բանայի,

— Ո՞ւր ենք, ըսաւ նա։

— Գիւղ մը, Մոսկուայի մօտ։

Եւ երբ կ'պարմանար առանը պաշարող մթութեան վրայ, պատասխանեցի որ թերևս մեզ կ'հալածէին թշնամիներն և թէ կըվախնայի կասկածներ գրգռել։ Այս պատասխանէս գոհ մնաց, և վաստակաբեկ՝ ղրաւ գլուխը բարձին վրայ և առանց լոյսի խորունկ քնացաւ։

Զ

Վաղուց արևը ծագեր էր, երբ արթնցաւ Կասպօն։ Աչնային զուարթուն ճառագայթներ լիասփիւռ կ'մտնէին իր սենեակն։ Անտառներու հոտով տոգորուն սիւքն կ'սահէր ներս կիսբաց պատուհանէն և կ'բևեռէր իրեն անուշաբոյր բխումներ որով կըհամակուէր ըոլոր մարմինն և որոց խորհրդաւոր և հեշտագին

աղքեցութիւնը կ'կրէր անզգայօրէն : Իր ակունքն լուսոյ վառ-
վռուն փայլէն չլանալով դոցուեր էին : Մնաց կասկած մի քանի
վայրկեան այս վիճակին մէջ, որ ոչ արթնութիւն և ոչ քուն էր,
օրորուելով բիւր չլունչներէ որ կ'հնչէին ականջին երբոր ար-
թննար : Այս չլունչներն էին հովիւներու երգերն, վայրի ա-
ղաւնիներու գեղգեղանքն, հեռաւոր ջրանցներու մռնչիւնն,
աղօրիին դռնչիւնն, և՝ աւելի մօտ, մանկային զուարթագին ճի-
չեր որ վամփուչտներու պէս առաւօտեան թարմ ու հնչական
օդին մէջ կ'սուրային : Այս չլուկներն ու գեղջական մեղեդի-
ներն կ'յիշեցնէին իրեն անորոշակի իր երիտասարդութեան բա-
րերաստիկ օրերը : Խեղդուկ ձայնով մը մրմնջեց իր որգեկին և
իր կնկան անունն : Արտօսր մ'ուռեցուց իր կոպն և թրջեց իր
արտևանունքը : Սակայն պահ մը դադրած մրրկալի խորհուրդ-
ներն սկսեր էին գոռալ իր սրտին մէջ : Իր անկողնին մէջ յան-
կարծ արմուկները դրաւ և զարմանահար ակնարկ մը նետեց իր
շուրջն : Իր տունն էր, իր հարց յարկին ներքև, այն յարկին
ներքև՝ որ այնքան երկար ժամանակ իր երջանկութեան ապա-
ւէնն էր եղած : Իր բոլորտիքը գտնուող առարկաները մի առ
մի կ'ճանչէր · իր գրեանն, իր պատկերներն, իր կահերն, իր վի-
ժակներն և ամեն անոտի այլ չքնաղ իրերն որ կենդանութիւն
կ'տան մեր բնակած վայրերուն : Ձեռքը տարաւ ճակատին, մար-
դու մը պէս որ կ'հարցնէ իւրոյի թէ արդեօք պատրանաց կամ
երազի մը խաղալիքը չէ՞ : Գլուխը դարձնելով, տեսաւ՝ իր անա-
բին մօտ կանգնած, իր կինն ու բժիշկն որ կինք կ'դիտէին ժըպ-
տելով :

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ կոմս, ըսաւ ծերունին զուար-
թագին, այնպէս կ'երևի ինձ որ այս առաւօտ լաւագոյն վիճակ
մ'ունիս : Ահա աղատ ենք վճռանքէ, թէև քիչ մնաց որ մեր
կեանքը վրայ պիտի տայինք : Կարող ենք, թէ սխալած պէս, պար-
ծիլ որ խաւարին ոտիանքը տեսանք :

— Ա՛հ, դոչեց տիկին Վալկրան, դու բժիշկ, դո՛ւ աղատե-
ցիր զինք :

— Ե՛ս, տիկին . . . է՛հ, Աստուած վկայ, որ կոմսն աղա-
տեց ինքզինք : Ապուշի պէս մեռնելու չանձն չառաւ, և երբ
կ'խորհիմ թէ քանի քանի բանաւոր պատճառներ ունի կեանքը
սիրելու, կ'հետևցնեմ որ կոմսը շատ լաւ վարուեցաւ :

— Սիրելիդ իմ Կասդօն, դոչեց տիկին Վալկրան խանդա-
ղին գորովոյ շեշտով մը . . . Միթէ դիտէս, բարեկամդ իմ, որ

մեզի բաւական հոգ պատճառեցիր։ Գիտէս արդեօք որ զառանցական վիճակիդ մէջ և ոչ իսկ կինդ ճանչելու կարող էիր . . . Այժմ կ'ճանչես զիս, այնպէս չէ՞, ահ ու դող չեմ աղդեր քեզի։ Ես, ես եմ քեզ սիրողն, ես կ'վերածնիմ քեզի հետ։

— Նայինք քիչ մը թէ ինչ կ'ըսէ այս բազկերակն, յարեց բժիշկն Կասդօնի ձեռքը բռնելով։

— Լաւ, ինչպէս կ'գանես, հարցուց Նորատի կոմսուհին։

— Լաւ ուրեմն, սիրկին, ահա կ'յայտարարեմ թէ այս բազկերակը կ'հաստատէ որ ուժ օրէն կամն ուղ սիրտ եղեծ, և առ այժմ յօժարակամ սիրտ ընդունի սպիտակ ձեռքէդ արդանակ մը։

Նոյն պահուն ծէրմէն ներս մտաւ։ Մօտեցաւ իր տիրոջ անկողնոյն և անոր առողջութեան վրայ հարցումներ ըրաւ, որպէս թէ առջի օրն տեսած լինէր։ Կասդօն կ'նայէր մերթ կնոջն և մերթ բժշկին։ Կարծէր թէ կ'երազէ։ Յանկարծ սարսուռ մ'զդաց և ելաւ նստաւ . . . ։ Լսեր էր մանկային ձայն մ'որ կ'դայլայլէր իր պատուհանին ներքև։ Տիկին վալկրան դէպ ի պատուհանը դնաց, վարագոյրը վերցուց և այս պարզ խօսքն արտասանեց .

— Օլիվիէ, միթէ չէս դար հայրիկին բարի լոյս ըսելու։

Դուռը բացուեցաւ, փոքրիկ գեղանի տղայ մը մտաւ աջ խուժ իւ սենեակը։ Յատկեց անկողնին վրայ, իր ճերմակ թևերը փաթթեց Կասդօնի վիզին չուրջն և անոր ըսաւ .

— Բարի լոյս, հայրիկ . . . ։

Նոյն ինք, Օլիվիէն էր։ Մօր մ'աչքն անգամ կրնար խաբուիլ։ Օլիվիէն էր, ճիշտ այն Օլիվիէն զոր տեսեր էինք աղէտաբեր օրն երբ հայրը բերած էր զանի իմ տունս։ Մի և նոյն աչկունքն էին, կապուտակ ու վճիտ, նոյն բերանն, թարմաւէտ և ժպտուն, նոյն մազերն՝ դեղձանիկ ու նրբաթել։ Իր աջ յօնիկն մօտ ունէր նոյն թխագոյն նիշն և քթին արմատին վրայ, թափանցիկ կաշիին ներքև մի և նոյն երկնագոյն երակն, նման լազուարթի կիսաձև մատանիի։ Անշարժ, չուարած, անճայն կ'դիտէր Կասդօն, աչքերը կ'լափէր մանկիկն և անոր վրայ իր դողդոջուն և անյագ ձեռները կ'ածէր։ Ի վերջ՝ յանկարծական չարժումով մը, պատուեց զան բացաւ մանկան բազկենն, և փղոսկրի տեսակ մը նման սպիտակ և փխրադաղ գտնելով այն կուրծքն սրտ վրայ ընդունայն կ'փնտռէր հարուածին նշանն՝ զոր մահարեր կարծած էր, ապուշ կրճած, յետին ծայր սիրտ

այսպիսի բառեր այլայլութեանց տրկալու, ընչաստատ ընկաւ իր դրկացը մէջ ուննենալով մանկիկը։

(Շարունակելի) Ժ. ՍԱՆՏՕ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ*

ԴԱՍ Ը.

ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ծաղ, գբօսանք և պարզուք։ — Եթէ կայ մանկան համար յատուկութիւն մը որու պէտք է թոյլ տալ աղատօրէն զարգանալու, այս է ֆիզիքական դործունէութիւնն որ իր բնութեան էական հիմը կ'կազմէ։ Իրօք՝ երբ մանուկն աղատ է, կ'տայ ինքզինք բոլորովին և անդադար խաղի ու կրթութեանց որ մեծ ոյժ կ'ստանջեն։ Կ'երերայ, կ'չարժի, վասն զի պէտք կ'զդայ չարժելու, ինչպէս կ'զդայ նորատի կենդանին որու աստուածներն, առերևոյթս աննպատակ, զրեթէ անընդհատ են։ Ինչպէս որ վոքրիկ չոչնները կ'հաչեն, կ'ոստոստեն կամ կ'վազեն, առանց պատճառի, թաւկոյին եռանդութեամբ, ինչպէս որ կատուիկն կ'տարուբերի, կ'խաղայ իր մօր հետ կամ առարկայի մը հետ որ դեռ ինքը կ'զլորի և որու հետ կ'զբօսնու իրրև որսին հետ, ինչպէս որ թռչուններէն կ'զարնեն իրենց թևերը, խնդապին ճիչեր կ'արձակեն, նոյնպէս մանկիկն մինչդեռ օրորոցն է, անգիտակցաբար կ'չարժէ իր թևերն, իր սրունքն և վոքրիկ ձեռները։ Վերջէն ալիտի վազվզէ տան մէջ, գետինը ալիտի տապալէ յօժարակամ կահերն, պարտիզին ծառերուն վրայ մագլցի ալիտի ելնէ, դռա ու գոչում հանելով ալիտի քաշէ իր պզտիկ կառքն և չալիմի կրնայ իսկ առանց աղմկալի դեղման դորովոյն ըսել իր մորը թէ դինք չատ կ'սիրէ։

Վասն զի այդ փոքր մարմնոյն և նորածին իմացականութեան

* Տե՛ս Ալիս առաջիր, երես 209։

ամեն կողմը կեանքը կ'պայթի, յորդառատ կ'հոսի և կ'ճառագայթէ անդամ իր մօտակայից վրայ։ Միթէ տխուր չէ տունն ուր չկայ մանուկ, ինչպէս ըսաւ բանահիւսն, որպէս վանդակն առանց թռչունի։

Տեղը չէ վիճիլ խանձարուրի խնդրոյն վրայ, որու դէմ այնքան ազդուածեամբ խօսած են Ռուսօ և Փանդ։ Սակայն անպատեհ չէ նշանակել, որ դաստիարակութեան նկատմամբ, չըլկան մանր ու աննշան իրեր, վասն զի շատ մարմնային սովորութիւններ, որ կ'տեսնուին արդէն բաւական մեծցած տղոց վրայ, կրնան իրենց գոյութեան առաջին ամիսներուն արդիւնքն եղած լինիլ։ Արդ՝ սիւոի տեսնենք որ ներքին յարակցութիւն մը կայ մարմնոյ և մտքի սովորութեանց մէջ, ուստի պիւրին է եզրակացնել թէ՝ նկատումներ որ թերևս աննշան թուին, ունին սակայն իրական կարևորութիւն մը։ Բայց զանց պիտի ընենք այս խնդիրն, թէև շատ շահագրգիռ է, և պիտի խօսինք՝ դրսպրոցական տեսակէտով, խաղի և զբօսանքի վրայ։

Արդ՝ պէտք է ուրեմն որ մանուկը խաղայ*, չարժի, վասն զի իր մտային և ֆիզիքային զարգացումն այդ կ'պահանջէ։ Տըղուն չարժումն արգիլել, անկարելին փորձել է։ Ինչպէս իրաւամբ դիտել կ'տայ Տիկին Բաք. Ռարրանդիէ. «Մանկանց բնազդն կ'գծէ սահմանն ուստի չէ պարտ անցնիլ։ Եթէ կամակորութեամբ իրր թշնամի նկատուի այդ բնազդն, եթէ փորձուի զայն ճնշել, ընկճել, խորտակել, մենք զրկած և մեր միջոցները կ'խորտակենք։ Չնար չէ յայտնիլ այս պայքարին մէջ որ բնութեան օրինաց դէմ է, կամ վայ անոր որ կ'յաղթի և կ'ժամի պատասխանատուութիւնը սառանձնել»։

* կարևոր է նշանակել, որ յետին ծայր անհեթեթ ու անգութ բան մ'է յանկարծ լռութեան, անշարժութեան դատապարտել այն մանկիկներն որ սովրած են մի քանի տարի երգելով, պարելով ու խօսելով ուսման հետեւիլ։ Ի'նչ տանջանք այն նորափթիթ մանկանց համար՝ առանց անցումի, առանց պատրաստութեան լուռ ու մունջ ու անշարժ մնալն ժամերով դասարանին մէջ և կարգապահութեան կանոններն անթերի կատարելը։ Դատ մը տգէտ անձանց աչքին բարեկարգութեան դերադոյն կայանը կ'համարուի այն վարժուն ուր մանկիկներն ձեռներն խաչաձև կուրծքի վրայ, աչերն գետնահակ, ոտներն կապած, գրեթէ անշունչ կ'բազմին ժամերով իրրև արձան նստարաններու վրայ։ Կ'գանուին Հայոց մէջ դեռ ևս այսպիսի քահաներ, ուր մանկան ոչ միայն մարմինն կ'հաշմուի այլ և միտքը կ'ոնի և կերպ մ'անկամ և անոգի մեքենայ մը կ'դառնայ երբ մանուկը մեծնայ։

Խաղն թէ ֆիզիքական և թէ բարոյական առողջաբանութեան պահանջումն է: Ինչպէս մանկան կորովը և առողջութիւնն խաղի մէջ յայտնապէս կ'երեւին, նոյնպէս կ'երեւին և իր բնաւորութիւնն, իր հակմունքն: «Բնութիւնն է որ կ'խօսի» կ'ըսէ Մոնթէյն, և Ֆէնելըն, Լոք, Ժէրար, տիկին Նեքեր ըլ Սօսիւր, Միւնօէր այս կարծիքն ունին որ ծնողք կամ դաստիարակներն պարտին շատ քիչ ուշ դարձնել այս խաղերուն: Բաւ է դիտել մանուկներն զուարթ դէմքով մը, թոյլ տալ որ ըստ հաճոյս խաղան և միայն չափաւորել անոնց եռանդն երբ սաստիկ կ'տաքնան»: Ուրեմն ո՛չ ճնշում և ոչ չափազանցութիւն, այլ հսկողութեան ներքեւ ազատութիւն:

Մանաւանդ քաղաքներու տղոց պէտք է չթայլել բացօդեայ խաղեր պարտէզներու մէջ՝ ուր կրնան վազվզել և ըստ հաճոյս խայտալ: Այս մասին վարժապետներն տարակարծիք չեն ի Բարիզ: Բաւական է, տուգելու համար, միջօրէին երթալ հասարակաց պարտէզներն, ուր մարդ հանդիսատես կ'լինի անվերջանալի դերառի (barres), գնդակի և շունչանի խաղերու, որոց հոգւոյ մարմնոյ կ'յարին աշակերտներն որ հոն եկած են դաստառներու առաջնորդութեամբ: Նորատի աղջկունք ևս կը յամախեն անդ, բայց ո՛րչափ տարբերութիւն այս կողմէն: Հապա տասնեակներու տարին կ'մտնեն, և փոքրիկ օրիորդները կ'սկսին այնպէս կեղծել թէ չեն վախցեր խաղալ, մեծ կինեբու հովեր կ'առնուն և վարժուհին տէպ կ'տախտակի հրամայել, մինչև իսկ անձամբ օրինակ տալ, որպէս զի դաս ա՛ղջիկները յորդորուին մասնակից լինիլ իրենց ընկերուհիներուն խաղին: «Ինչո՛ւ համար է այդ զարմանալի տարբերութիւնը, կ'հարցնէ Սբենակը: Մինչ տղկան մը կազմն էապէս կ'զանազանի աղջ մը կազմէն, որ այդ մարզանաց պէտքը չզգայ: Մինչ տղկիկ մը չունի բնաւ այն ճաշակն որ կ'մղէ աղայքն աղջկայի խաղերու: Թէ ոչ մինչ հաւրիկ է ենթադրել որ, մինչդեռ բնութիւնն այդ ճաշակը տուած է տղոց իրրև զգացուիչ դործունէութեան մը որ, եթէ պահէր, չպիտի կարող լինէին բաւական զարգանալ, տուած է զայն իրենց քոյրերուն մի միայն վարժուհիները հեղելու համար . . .» «Այսպէս ուրեմն մինչ պէ՞տք է թոյլուլ որ նորատի աղջկունք աղատագրին և տղոց չափ ալմուկ հանեն», պիտի դոչէ պատչաճութեանց եռանդուն կուսակից մը: Այս կերպով փոքր աղջկունք պիտի ստանան այնպիսի սովորութիւններ որ բնաւ չեն յարմարիր ազնիւ կանանց:

«. . . Այս երկիւղն անհիմն է . . . կ'ըսէ Սբ. Յովհաննէս, վասն զի եթէ դործնական խաղեր որ ներելի են տղոց, չեն արդիլեր բնաւ որ աստնք վերջէն աղնուադարոյ մարդիկ լինին, ինչ պատճառաւ մի և նոյն խաղերը պիտի արգելք լինէին տղոյկանց բարեմոյն կիներ դառնալու։ Պատանիներն երբ կ'թողուն իրենց բաճկոնակն, կ'թողուն նաև պատանեկան խաղերն . . . : Մինչ կանայք չունինն, աւելի քան մարդիկն, արուաքին պատշաճութեանց յարգանքն, և ո՛րքան անհեթեթ է ենթադրել, որ կընկան բնազդմունքն ինքնին չդիտի զօրանան, այլ պէտք պիտի լինի ծանր կարդապահութեան դիմել վարժուհւոյն միջոցաւ»։

Ի մի բան՝ թող մանկան դործունէութեան պէտքն ոչ միայն յարդուի, այլ և վարժարանին և տան մէջ քաջալերուի դաստիարակն և զբօսանաց ժամերու իսկոյն կանոնաւորութեամբ։ Խօսքն ու երգն զուրս կ'դործածէ մտացի վարժապետ մը, կենսապահիկ և մտային կրթութիւններ են։ Այդ միջոցաւ դաստիարանաց միօրինակութիւնը կ'դադրի, հարցումներն ու պատասխաններն իրարու կ'յաջորդեն արագօրէն, դասարանին մէջ կենդանութիւն կ'տիրէ խօսող աչակերտին ջերմագին, թրթռուն և հնչուն ձայնովը, մինչդեռ իր ընկերակիցն անհամբեր կ'սպասէ այն վայրկեանն, երբ՝ ըստ կարդի, պիտի կարենայ բարձրաձայն ըսել ինչ որ իր չրթունքը կ'այրեն և ինչ որ ջղային չարժուամ մը կ'տան անոր իր նստարանին վրայ։ Եթէ, ինչպէս կ'ըսեն, լաւագոյն դիրքը վարժապետին խօսքն է, կարելի է նաև ըսել նոյնքան ճշդութեամբ որ լաւագոյն պարտաւորութիւնն աշակերտին խօսքն է։

Այն պատոյներն զոր վարժապետն իր աշակերտներով պիտի ընէ արձակուրդի օրերն, նոր միջոցներ են տղուն ֆիզիքական զարգացման համար, ինչպէս նաև իմացական դաստիարակութեան համար հզօր օժանդակներ պիտի լինին։ Այս պատոյներն կրնան լինիլ այցելութիւններ գործատուններն, բայօղեայ բուսաքաղութիւն և այլն, որ ոչ միայն զուարճութիւն պիտի հայթայթեն այլ նաև մարմնոյ և մտքի պատուական կրթութիւն մը։

«Այսպէս քանի՛ քանի՛ օդտակար ծանօթութիւններ կարելի է ստանալ չօշափելեօք և լսելեօք, առանց նեղութեան և առանց ձգանց։ Գիտական քանի՛ քանի՛ չհասուէտ ծանօթութիւններ այսպէս աչակերտներու աչաց կրնան զարդուիլ, յօդուտ իրենց կրթութեան, տալով միանգամայն մարմնոյն այն առողջարար դործունէութիւնն, որով տղայք կարող կ'լինին վերստին

սկսիլ աւելի արդիւնաւոր և աւելի հաճոյարար կերպով մտային զբաղմունքը (Տր. Ութան)»։

Ընկերային բնազդումներու դաստիարակութիւնն աւելի դիւրաւ կ'կատարուի երբ մանկտին միասին կ'խաղան և կ'ապրին։ Ահա այն տեղ կ'ջիւրին բարոյքն, իրարու հակառակ բնաւորութիւնները կ'բախին և կ'ընդհարին, և իմաստուն դաստիարակ մը շատ աւելի դիւրաւ կ'յաջողի ճանչել աղաչքն մերթ ընդ մերթ քննելով անոնց չարժուձեներն զբօսանաց ժամանակ, քան ինչ որ պիտի կարենար կատարել երկու տարի շարունակ դիտելով ղանոնք դասարանին մէջ։

Վ.

ՈՒՐՈՒԱԳԻՐ ԴԻՏՈՒԹԵԱՆՑ*

11. ԳէօոըՆէն. — Բնական օրինաց ձանօթութիւնը կ'պատճառէ գէօգրաֆեամբ, փոքյճ և քանաքատութեամբ. — Ձէ կարելի սահման մը դնել իրերու հասարակ ծանօթութեան և գիտական ծանօթութեան մէջ, և ոչ հասարակ քանաքատութեան և գիտական քանաքատութեան մէջ։ Ճիշդը խօսելով՝ ամեն ճշդիւտ ծանօթութիւն գէօոըՆէն է, և ամեն ճշդիւտ քանաքատութիւն գիտական քանաքատութիւն է։ Գէօգրաֆեան և փոքյճ եղանակն ոչով այնքան նշանաւոր ապրիլնք յառաջ եկաւ գիտութեան մէջ, յոր և նման է այն եղանակին զոր ամեն ոք կ'գործածէ իր առօրին կենաց մէջ, այս տարբերութեամբ միայն որ աւելի կատարեալ է և որոշ։ Երբ մանկիկն նոր խաղալիկ մը կ'ստանայ, կ'դիտէ անոր նկարագիրն և յատկութեանցը վրայ փորձեր կ'ընէ։ Եւ մենք ամենքս անդ ադար դիտողութիւններ և փորձեր կ'ընենք այս կամ այն բանին վրայ։

Բայց այն մարդիկ որ քնաւ չեն փորձած ճշդիւ դիտելու, պիտի զարմանան տեսնելով թէ քանի դժուարին գործ է այն։ Հարիւրին մի մարդ չկայ որ ամենէ սովորական իրողութիւնն ճշդութեամբ նկարագրէ։ Աւելի ապրդ խօսելով՝

* Տե՛ս Մայիս ամսադիր, երես 211։

այն նկարագրին մէջ կամ գանց պիտի ընէ չիչել մի բան որ տեղի ունեցած է և որ կարևոր է, և կամ պիտի ակնարկէ կամ թելադրէ բան մը զոր իրապէս չէ գիտած, բայց կ'ենթադրէ անգիտակցաբար թէ պատահած պիտի լինի։ Երբ երկու արժանահաւատ վկաներ կ'հակաբանեն իրարու դատական ատեանի մը մէջ, սովորաբար այնպէս կ'պատահի որ մին կամ միւսն, կամ երբեմն երկուքը միասին, կ'չփոթեն իրենց տեսած բանէն հանած մակածութիւններն այն բանին հետ զոր ճշմարտապէս տեսած են։ Ա կ'երդնու թէ Պ իր գրպանը դրաւ ձեռքը դուրս հանելու համար։ Բայց այնպէս կ'երևի թէ Աին իրապէս գիտցածն այս է որ ձեռք մ'զգաց իր գրպանին մէջ երբ Պ իր քովն էր, և թէ Պ դուրս չէր, այլ Գ զոր Ա դիտած չէր։ Անփորձ դիտողներ տարօրինակ կերպով իրարու հետ կ'չփոթեն իրենց եզրակացութիւններն այն բաներու վրայ զոր կ'տեսնեն և այն բաներու վրայ զոր ճշմարտապէս կ'տեսնեն. մինչև անդամ փորձառու և մտադիր դիտողներ անդադար նոյն սխալանաց մէջ գլորելու վտանգին մէջն են։

Գիտական դիտողութիւնն ոչ միայն լիակատար ու ճշդրիտ է, այլ և ո և է անգիտակ մակածութենէ ազատ։

Փորձն պատահած բանի մը դիտողութիւնն է՝ երբ դիտմամբ իրարու մօտ կ'բերենք բնական առարկաներ կամ զանոնք իրարմէ կ'բաժնենք, կամ կերպով մը կ'փոփոխենք այն պայմաններն որոց մէջ կ'գտնուին։ Հետևապէս գիտական փորձն գիտական դիտողութիւն է որ ճշդրտապէս որոշուած արուեստական պայմաններու մէջ կ'կատարուի։

Ամենուն գիտած բանն է թէ ջուրն երբեմն կ'սառի։ Այս դիտողութիւնը գիտական կ'լինի երբ կ'սառուցնենք այն ճշդրիտ պայմաններն որոց մէջ ջուրը սառոյցի կ'փոխուի։ Ամենէ գրեհիկ փորձը ցոյց կ'տայ մեզի թէ փայտը կ'ծփայ ջրին վրայ։ Գիտական փորձը ցոյց կ'տայ թէ փայտը ծփալով իր ծանրութեանչափ ջուր կ'տեղափոխէ։

Գիտական բանաթափութիւնն (reasoning) սովորականէն կ'զանազանի ճիշտ այնպէս ինչպէս գիտական դիտողութիւնն ու փորձը կ'զանազանին սովորական դիտողութենէ և փորձէն — այսինքն, կ'ջանայ ճշդրիտ լինիլ, և իրօք այնքան դժուարին է ճշդրտապէս բանաղատել, ինչպէս ճշդրտապէս դիտել։

Գիտական դիտողութեամբ՝ չատ մանուսւոր պարագաներէ ընդհանուր կանոններ կ'քաղենք, և երբ այս ընդհանուր կանոն-

ներն մի անգամ հաստատուին, անոնք եզրակացութիւններ կը-
հանենք՝ ինչպէս սովոր ենք ընել մեր առօրին կեանց մէջ։ Եթէ
տղայ մ'ըսէ թէ մաթմաթները կաթնէ են, իր տեսած և չօշափած մա-
մարներէն եզրակացութիւն մը կ'հանէ ընդհանրապէս բոլոր մա-
մարներու մասին, և կ'դործածէ բանադատութեան եղանակ մը
որ արուեստագիտապէս մանթօսլինեան կ'կոչուի։ Եթէ մերժէ մա-
մար մ'իր ակռայովը խորտակելու փորձել, պատճառն այս է որ
գիտակցաբար կամ անգիտակցաբար ընդհանուր կանոնին վրայ հիմնուե-
լով թէ՝ «մարմարները չատ կարծր են և չեն կրնար խորտակ-
տակուիլ մարդու ակռաններով»։

Բանադատութեան եղանակին վրայ աւելի երկար և լիուլի
կ'խօսի Տրամաթանոլինեանը։ Այժմ բաւ է դիտնալ որ բնութեան
օրէնքն՝ բնական առարկայից ընթացքին վերաբերող ընդհանուր
կանոններն են, որ անթիւ դիտողութեանց և փորձերու վրայ
հիմնուած են. կամ այլապէս ըսենք, անոնք մակածութիւններ
են որ այդ դիտողութիւններէն և փորձերէ հանուած են։ Գի-
տութեան գործնական և տեսական հետևանքն՝ այդ կանոննե-
րու վրայ հիմնուած ընթացական բանադատութեան արդիւնքն
են։

Այսպէս դիտութիւնն և ուղիղ բանն, ինչպէս կ'երևակայեն
ոմանք, իրարու հակառակ չեն, այլ դիտութիւնն կատարելա-
գործուած ուղիղ բանն է։ Գիտական բանադատութիւնն պար-
զապէս սովորական բանադատութիւն է յետին ծայր մտադիր,
և հասարակ ծանօթութիւնն գիտական կ'դառնայ քանի ճշդը-
տադոյն և կատարելադոյն կ'լինի։

Ուրեմն սովորական ծանօթութեան ճամբով կարելի է հաս-
նիլ գիտութեան. պարտինք այդ ծանօթութիւնն ընդարձակել
ուշադիր դիտողութեամբ ու փորձով, և ուսանիլ մեր հետա-
զօտութիւնները ճշդութապէս հաստատելու կերպն՝ ընդհանուր
կանոններու կամ բնական օրինաց ձևով. վերջապէս՝ պարտինք
ուսանիլ ճշդիւ բանադատել այդ կանոններու հաւեմատ և այս-
պէս բացատրել ճշդիւ բնական երևոյթներն, որ բաւական լի-
նին մեզ առաջնորդել կեանց մէջ։

ՀԸՐՍԼԵԹ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պատ. Հոգաւոր Ընկերութեան Տնօրէն Խորհրդոյ միաձայ Տեղեկագիրն հրատարակուած լինելով՝ խմբագրութիւնս արժան դատեց զայն նոյնութեամբ արտատպել և թերթիս ընթերցողաց ուշադրութիւնն ու քաջալերութիւնը հրաւիրել այդ Ընկերութեան կրթասիրական ջանից վրայ։ Փափաքելի էր մեզ նաև գրել քաղքիս Պատ. Աղքատասիրաց Ընկերութեան վրայ, որ, ինչպէս ի լոյ կ'իմանանք, իր Տեղեկագիրն արդէն հրատարակած է, բայց այդ Տեղեկագիրն ցարդ ղրկուած չէ խմբագրութեանս։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՑ

ԱՌ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1887 ՅՈՒՆՎԱՐ 1 — 1887 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

Աղնուափայլ Ատենապետ Ընդհ. Ժողովոյ,

Պատ. Հոգաւոր Ընկերութեանդ Տնօրէն Խորհուրդն, ձեր պաշտօնավարութեան շրջանը լրացած տեսնելով՝ պարտ կ'համարի իր հրաժարականին հետ միատեղանել նաև իր միաձայ Տեղեկութիւն, որու մէջ ամփոփուած է ինչ որ կարևոր և արժանի է Ձեր ուշադրութեան։

Ընկերութեանդ նպատակը կրթական լինելով՝ Խորհուրդս իր բոլոր բարոյական ոյժն և նիւթական միջոցներն այդ նպատակին համար գործածելու չանգիր դրատնուած է, քալ ղդալով իր պաշտօնին կարևորութիւնն և միանգամայն փափաքելով արժանի լինիլ այն վստահութեան որով հաճեցաք կոչել մեզ այս պաշտօնին։

Ազգարև՝ որպէս Տեղեկատուի մէջ չունինք արձանագրել մեծամեծ գործողութիւններ, հանրօգուտ ձեռնարկներ ի նմանատանդ ընկերութեանս բնութեան և նուաստութեան հակառակ է չափազանցօրէն յայտագրել ինչ որ իրրև սեզգային պարտաւորութիւն կատարուած է մեր կողմէ սահմանաւոր շրջանի մէջ, սակայն որքան անշուք և համեստ լինին ի նպատակ կրթութեան եղած ընկերական չանքերը, որքան աննշան թուին յառաջադիմական քայլերը, դարձեալ ունին իրենց նշանակութիւնն, այս նկատմամբ որ ազգային կրթասիրական հանուր շարժման մի մասը կ'կազմեն և հանրային յառաջդիմութեան գործին մէջ կ'պարունակուին։

Քանի որ այժմ լինքնօգնութեան սկզբունքն մուտ գտած է Հայոց մէջ, քանի որ ամեն ինչ ազգային իշխանութենէն յուսալ անտեղի է, քանի որ կրթութիւնն ինչպէս երբեմն, արանց մենաշնորհը չէ և ոչ այդ կրթութեան ծաւալման համար ձեռնհաս եղած ազակցութիւնն, բնապէս ոչ միայն մէն մի գաւառ ու վիճակ իր յատուկ միջոցներով և ընկերակցական ոյժերով պարտի բարւոքել իր մտային և բարոյական վիճակն, այլ և այդ բարւոքման գործին մասնակից դառնալու իրաւունք և պարտաւորութիւն ունին նաև կանայք ամեն տեղ։

Ահա այս նկատմունքն ծնունդ տուին Հոդ. Ընկերութեան որ իր տնտեսական հաստատութենէն ի վեր կ'շարունակէ, ըստ կարողութեան, գործել և սատարել ազգային կրթութեան տարածման։ Ւման պիտ ներկայ լուսաւորութեան դարուս մէջ՝ ամեն ինչ որ այդ կրթութեան կ'ծառայէ չէ խոտելի, ամեն զոհողութիւն, որքան աննշան լինի, չէ անգոսնելի։ Անտարբերութիւնն ազգային հաստատութեանց առջև, հակառակասիրութեան և դժկամակութեան ոգին այն ամեն բաներու դէմ որ հայութեան դրոշմ և անշահախնդիր աշխատութեան նշանները կ'կրեն, ահա ինչ որ դատապարտելի են և այս դատապարտութենէն ղերծ մնալու համար Ժմիւռնիոյ հայ կանայք պարտաւոր էին շարժիլ։

թէ այս չարժուձն ինչ արդիւնք բերաւ, այլոց թողլով նշանակել, խորհուրդս իր առաջադրած նպատակին կ'դառնայ, յայտարարելով որ եթէ Հոդ. Ընկերութիւնն ձեռնաուն դանուած է փոքր ի շատէ կրթական հաստատութեանց, այդ ձեռնաուութիւնն մեծ մասամբ կ'պարտաւորի ոչ միայն իր անդամակցայ այլ և աղնիւ և բարեսէր անձերու առատասրտութեան և վստահութեան։ Այս համակրութենէն քաջալերեալ խորհուրդս գործի ձեռնարկեց, ամիսը մի քանի անգամ նիստ ընելով՝ այլ և այլ գործեր տնօրինեց, մանաւորապէս իր հոգածութեան առարկայն լինելով Ս. Հռիփսիմեան վարժարանի աղքատիկ աշակերտուհեաց վիճակն, որոց դրական և ղեկտի պիտոյքն հոգաց, ձեռագործներ պատրաստել տալու համար պիտանի նիւթեր դնեց, Ընկերութեան դրամական միջոցներն արդիւնաւորելու մտօք պատրաստուած ձեռագործներ մասամբ ծախու և մասամբ վիճակահանութեան հանեց, ըստ առաջարկութեան Պատ. Ուսումնական խորհրդոյ արդէն սահմանած վարժուհւոյն անական թոշակն աւելցուց և Ձեր որոշման համեմատ երիզայի Ընկերական վարժարանի վերատին ուղարկեց իբրև նպաստ 10 օսմ. ոսկի, բայ աստի՝ Հռիփս. վարժարանի մեծ սրահին համար նոր կարասիներ և յատկապէս 4 ընտիր հայելիներ դնեց։

Խորհրդոյս չանից իրապէս մանաւանդ եղան նաև այլ և այլ բարերարներ։ Յատուկ չնորհակալեաց և երախտագիտութեան արժանի են պարահանդիսի Պատ. Մասնաժողովն որ հաճեցաւ Ընկերութեան 10 օսմ. ոսկի նուիրել դոյացած արդիւնքէն, ինչպէս նաև բարեյիշատակ Մեծանուն Բարերար Յովհաննէս էֆ. Սպարդալեան որ Հռիփս. 35 կարօտ սանուհեաց ղեկտեղէն պարգևեց. Մեծ. Ղուկաս էֆ. Եսայեան որ, ի յիշատակ իւր աղնուասուն և ողբացեալ ամուսնոյն, 60 սանուհեաց և մի քանի վարժուհեաց հանդերձեղէն հոգաց, նոյնպէս բարեբար ոմն 25 սանուհեաց համար նուիրեց ղեկտի նիւթեր։

Խորհուրդս աւելորդ կ'համարի ծանրանալ իր երկոց ու

մասից վիճակին վրայ։ Բաւական է միայն ասոր Տեղեկագրին մէջ հրատարակել նուէրներն և բաժինները ցուցակն, ինչպէս նաև ծախուց հաշուեցոյցն որմէ Պատ. Հոգաբարձու Ընկերութիւնն և Արդոյ Հասարակութիւնը կարող պիտի լինին գաղափար մը կազմել մեր գրամական կացութեան վրայ, կացութիւն որ թէև այնքան փայլուն չէ, համեմատութեամբ նորանոր պիտոյից, սակայն յուսալի է որ Պատ. Հոգաբարձու Ընկերութիւնն առնէ չան ի գործ դնելով յաջողի նորանոր հասոյթներ գոյացնել և ընդարձակել իր գործունէութեան շրջանակը յօգուտ ազգային կրթութեան։

Ի վերջ Տնօրէն խորհուրդս իր չերմ շնորհակալիքը յայտնելով Աղդ. Քաղաքական ժողովոյ և Պատ. Ուսումնախորհրդոյ ինչպէս նաև բոլոր Ընկերութեան անդամից որ ամեն պարագայի մէջ չզլացան մեզի իրենց աջակցութիւնը, կ'կնքէ իր Տեղեկագիրն, ըստ կանոնագրի, ներկայելով իր հրաժարականը։

Ի դիմաց Տնօրէն խորհրդոյ

Ա. Քհնայ. Տ. ՆԵՏՏԱՐ ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ
Ա. Քհնաբ. » ՍԱՐԳԻՍԻ ՏԻԼՊԵՐԵԱՆ

ՄԻԱՄԵԱՑ ԲԱԺՆԵԳԻՆՔ

1887 ՅՈՒՆՎԱՐ 1 — 1887 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

		Մ.	Ք.
Տիկին	Արուսեակ Գ. Մարիսեան	5	40
»	Ագապի Պ. Մաղազաճեան	5	40
Օրդ.	Զարուհի Գ. Վարպետեան	6	
»	Թագուհի Թ. Տամկաճեան	5	40
Տիկին	Թագուհի Գ. Էմմասեան	10	
»	Թագուհի Մ. Յակոբեան	8	
»	Հռիփսիմէ Պ. Պաքրճեան	8	
»	Մարիամ Ա. Կարապետեան	6	
»	Մարիամ Մ. Ալփիարեան	5	
»	Մարիամ Յ. Ճէլէպեան	8	

Տիկին	Մարիամ Մ. Մամուրեան	4	
»	Յուստիանէ Զ. Տիլպէրեան	3	40
»	Նիկտար Ս. Սիվրիսարլեան	8	
»	Ոսկի Թ. Առաքելեան	8	
»	Սրբուհի Պ. Տիլպէրեան	5	40
»	Վասիլուհի Գ. Ճլմարտախօսեան . . .	5	40
»	Վարդուհի Գ. Զիլինկիրեան	6	
»	Վիրգինէ Տօք. Ճէլէպեան	5	40
»	Տուտու Ս. Մարկոսեան	8	
»	Տուտու Գ. Սվազլեան	5	40
		128	20

ՄԻԱՄԵՆԱՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՈՒԷՐՔ

1887 ՅՈՒՆՎԱՐ 1 — 1887 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

Տիկին	Մարգարիտ Յակոբեան	2	
»	Գայիանէ Ս. Աղաճանեան	2	
»	Մարիամ Կ. Սուքիասեան	2	
»	Մարիամ Օ. Շահվէքիլեան	2	
»	Աղգասէր ոմն	2	
		10	

ՀԱՇՈՒԵՑՈՑՑ

ՀՈԴԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1887 ՅՈՒՆՎԱՐ 1 — 1888 ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

ՄՈՒՏՔ	արժ. ֆռ.	
1886ի չրջանէն ուղղած	953	75
Պահեստի տոկոսի վրայ գոյացած տոկոս . . .	71	50
Բաժնեգինք Անգամոց	128	20
Նուէրք	10	
Պարահանդէսի հասոյթ	54	
Վիճակահանութենէ չահ	65	
Զեռագործներէ հասոյթ	51	50
	1333	95

ԵԼՔ	դր.	դծ.
Գրական պիտոյք կարօտ սանուհեաց	45	
Վարժուհիի ամսական	72	
Զեռագործներու համար ծախք	120	
Աղքատիկ սանուհեաց կօշիկ	85	
Տպագրական ծախք	10	
Մեսրոպեան երգեցիկ սանուց 12 ձեռք համազգեաց, 12 ֆէս և 1 զոյգ կօշիկ	144	50
Կարօտ սանուհեաց հագուստի նիւթ	15	
Հոխոխ վարժարանի սրահին 2 մեծ և 2 փոքր հայելի	173	
» » մաքրութեան	8	
Երիզայի դպրոցին նուէր	54	
Պերկամայի դպրոցի չինուիթեան համար 50 տումակ	12	50
Կարօտ սանուհեաց պահեստի ապրանք	57	
Վարժարանին այլ և այլ ծախք	6	55
Դռնապաններու պարգև	4	
Գործակատարին ամսական	12	
	818	55
Տոկոսի դրուած	472	
Պատրաստ յարկդ	50	
Գանձելի	13	40
	1333	95

Հոգաւոր Ընկերութեան Ցմօրէն Խորհուրդն իր միաձեայ (1887 շրջանի) Տեղեկագիրը ներկայացուց Ընդհանուր Ժողովին։ Ընկերութեանս Ժողովն իր շնորհակալիքն յայտնելով Ազնիւ Ցմօրէն Խորհրդոյ, Տեղեկագիրը վաւերացուց եւ արժան դատեց հրատարակութեան տալ զայն ի գիտութիւն Ազգոյ Հասարակութեան։

Զմիւռնիա 7 Յունվ. 1888։ ի դիմաց Հոգաւոր Ընկերութեան

Ատենապետ Տ։ ՎԱՐԴԱՒՀԻ ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆ
Քարտուղար » ԱԳԱՊԻ ՄԱՂԱԶԱՃԵԱՆ

ԱՌՈՒԱԿ

Արծաթափայլ առուակ վրճի՛տ,
Ըշտապում ես անդադար դուն.
Կանգնած խորհում եմ քո ափիդ,
Ո՞ւստ՝ ես գալիս եւ ո՞ւր գընում:

Ծայրի ծոցից դուրս եմ գալի,
Մամուխ, ծաղկի վերայ վազում.
Մէջ ճայելուս կապոյտ երկնի,
Սիրուն պատկերն զուարթ շողում:

Ուստի ուրախ տըղայի պէս
Ըշտապումեմ, ո՞ւր, չըգիտեմ.
Ես որ մըրիկն քարից կոչեց
Ինձ՝ առաջնորդ կ՛ինկի, կարծեմ:

7 Հոկ. 1883 ՝ի. ԱՐՄԷՆ. ԳԱՐԵԳԻՆԵՑ:

ԳՏԱՆ

Գընացի անտառ
Ես ինձ համար.
Մի բան փընտռեյ
Մըտրումս չըկար;

Կամեցայ քաղեմ
«Ես պիտի պոկուեմ»,
Ասաց անուշիկ,
«Ոն կը բառամիմ»:

Տեսայ ըսպասերդում
Մի ծաղիկ կանգուն,
Աստղի պէս պայծառ,
Աչքի պէս սիրուն:

Չպղնեցի ճղով
Ամբողջ ազմատով,
Եւ տարայ այգին
Գեղեցիկ տընկով:

Տընկեցի վայրում
Մի խաղող սիրուն.
Եւ նա այն օրից
Մըլուում է ծաղկում:

7 Հոկ. 83 ՝ի: ԱՐՄԷՆ. ԳԱՐԵԳԻՆԵՑ:

ԱՇՈՒՂ

Ի՞նչ եմ լըսում, ղըրսում, ղըրաճ
Ի՞նչ ճըճըւում կամըրջի վրաճ.
Թողէք երգը մեր ակաճջիճ՝
Այս դահլիճում ճըճըք կրկիճ:
Ասաց արքաճ, վազեց ծառաճ,
Եկաւ տըղաճ, կոչեց արքաճ.
Ներս բողեցէք այդ ծերուճուճ:

Ողջոյճ ձեզ ո՛վ քաջ իշխաճճեր,
Ողջոյճ սիրուճ իմ տիկիճճեր.
«Ի՛նչ չիճչ երկիճք, աստղ աստղի մօտ,
Ճուռճճերիճ ո՞վ է ծաճօք.
Դահլիճում ճոխ պերճ ու շըքեղ
Փակուէք աչքեր, չէ ժամ այս տեղ
Սրաճչաճալու եւ ճրճուելու»:

Աշուղը իւր աչքեր փակեց,
Բոլոր ուժով լարիճ զարկեց.
Խիզախ ճայուածեճ ասպետճերը,
Եւ ամօքխած — գեղաճիճերը:
Արքաճ, որ երգճ շատ ճաւաճեց,
Ի վարձ խաղիճ՝ ճրամաճ տուեց,
Ոսկէ շըղթայ պարգեւ բերել:

«Ոսկէշըղթաճ մի՛ տար աշուղիճ;
Շըղթաճ տուր քո ասպետճերիճ.
Որոճց խիստ խրոխտ տեսքից ջախուում
Ջախջախուում է դէկ բըշճամուճ:
Տուր ճարազատ այճ քո դպրիճ
Որ ճետ իւր միւս այլ բեռճերիճ
Այս ոսկեդէճ բեռճ էլ կըրէ:

Ես երգումեմ ինչպէս բուլճուճճ,
Որ սաղարթի մէջ է թառում.

Իմ կոկորդից երգը բըռչող
Վարձ է, որ ինձ վարձատրում ճոխ:
Սակայն թէ բոյլ տաք, համարձակ
Կը խնդրեմ լի գինով բաժակ
Ձուռտ ոսկեայ ինձ տալ նրամայել»:

Բերինին տարաւ, խըմեց մինչ տակ,
—Օ՛ն կազդուրիչ քաղցր օշարակ.
Տուն բաղդաւոր եռապատիկ,
Ուր որ այս է պարգեւ փոքրիկ:
Թէ բաղդն ժըպտայ, ինձ միտ բերէք
Ես Աստծուց դուք միշտ գոհ եղէք,
Ինչպես ձեզնից ես այս խմիչքով —:

12 Հոկ· 83 ա՛ֆ· ԱՐՄԷՆ· ԳԼՕՆԵԱՆ

ՅՈՒԶՈՂ ՆԱԽՈՐԴՈՒԹԻՒՆ

Ծըրտումեն ամպեր,
Երկինքը պարզուում,
Եւ լոսը քաղցում
Անքակ շըղթաներ:
Շրնչումեն քամիք
Նաւաստին շարժուում.
Արագ ու արագ
Ձատուումեն ալիք,
Հա մօտ է ճեռուն.
Տեսնումեմ ցամաք:

15 Հոկ· 85 ա՛ֆ· ԱՐՄԷՆ· ԳԼՕՆԵԱՆ·

ԿՈՎԿԱՍԻՆ ԼՈՒՐԵՐ

— Միակար Զարընտիրն ուշում է որ մի կերպով իր անունը կապէ մի լաւ գործի հետ էլ, և այդ լաւ գործը նա համարում է Էջմիածնի վերանորոգութիւնը։ Ապրիլի 6ին արդէն ձեռնարկել են Էջմիածնի տաճարի վերանորոգութեան, առաջնորդութեամբ ճարտարապետ Պ. Սալամբէկեանցի և նախօրօք պատրաստուած նախագծի համաձայն։ Նոյն օրը ձեռնարկել են Էջմիածնում մի նոր տպարանի հիմնարկութեան։ Պէտք է դիտենալ, որ ճարտարապետ (?) Սալամբէկեանցը գործել է Թիֆլիսում և մինչև վերջին օրերս էլ այս տեղ էր և վերջին տասնեակի չափով, կեղծիք և իբր մասնագիտութեան անհմուտ պաշտօնեայի հռչակ ունի։ Դեռ նորերս Թիֆլիսի ժողովարանը քննելով նրա մի քանի պաշտօնաթղթական գործերը, սարսափելի պղծութիւններ գտաւ։ Սալամբէկեանին շուտով մենք կ'տեսնենք գատարանի առաջ կանգնած . . . ։ Բայց մեղանում կան տաղանդաւոր ճարտարապետներ էլ, նոյն իսկ հայերից, որոնք ոչ միայն անաղարտ անուն ունին և անբասիր պաշտօնավարութեան ընդունակ, այլ և մեծ հմտութիւն, այսպէս է օրինակ Նոր-Դար լրագրի աշխատակից երիտասարդ Գրիգորեանը և այլն։ «Խուփը գլորուել՝ գուժն է գալը» ասում է ժողովրդական առածն այսպիսի դէպքերի համար։ — Թէ որքան կամայականութեան տեղ է տրուել հայոց կաթողիկոսական գահոյքն ընկած է կառավարութեան առաջ, երևում է հետևեալ դէպքից։ Զարընտիրն լաւ հասկանալով, որ իւր վարկը հայ ժողովրդի առաջ բոլորովին կոտրուած լինելով անկարող պիտի լինի ժողովրդից հանգանակել Էջմիածնի վերաշինութեան համար, դիմում է զանազան միջոցների, ինչպէս օրինակ, առանձին կոնդակներով պահանջել է եկեղեցիներից տասանորդներ (ինչպէս Թիֆլիսի միայն Տաճի թաղի՝ Քամոկենդ կոչուած եկեղեցուց 3000 րուբլի է ստացել. այդ եկեղեցու երէցփոխը Գ. Հէքիմեանցն է, թէև մի ամենաղնիւ՝ բայց ինչպէս ասում են, թուի մակարական անձն . . .), վանքապատկան կալուածների եկամուտներից բաժիններ և այլն և այլն։ Սակայն այդ ամենը քիչ համարելով՝ ինչպէս որ էլ է իսկապէս, դիմում է Կովկասի կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովին, որ

էջմիածնի վերաբինութեան համար հարկաւոր եղած փայտեղէնը մատակարարուի Սօղանլուի ամենահարուստ անտառներից ձրի։ արար . . . ։ Առաջ, երբ անկայուտակ Գէորգ կաթողիկոսի ժամանակ ոչ միայն չէին կարող չլսել կաթողիկոսական խնդիրը, այլ և դողում էին նրանից, իսկ այժմ Մակարը կաթողիկոսութիւնն այն աստիճանի է նուաստացրել, որ ոչ թէ միայն վերաժուռն է սառնում իր չիչաւ խնդիրքին, այլ նոյն իսկ պատասխանի էլ չէ արժանանում. խնդիրը անհետևանք են թողնում . . . ։ Մի քանի աւելի սարսափելի հարուած կարելի էր պատրաստել Մակարի համար . . . Թող կարդան և ուրախանան մեր Թուրքիայի հայ մատնիչներն և դաւաճաններն, որոնք հայ Ազգի պատիւն այս վիճակի ձգեցին ։

— Այս օրերս էջմիածնում հրատարակուած վիճակագրական տեղեկութիւններից հայ ծխական դպրոցների մասին, երևում է, որ անցեալ 1886—87 ուսումնական տարում Թիֆլիսի, Երևանի, Ախալցխայի, Արցախի և Շամախու թեմերում ունեցել ենք 111 տարրական դպրոցներ՝ 227 դասարանական բաժանմունքներով։ Աշակերտների թիւը հասել է 7819 հոգու, որից 4472ը տղայ են եղել և 3047ը աղջիկ։ Այդ աշակերտները բաժանուելիս են եղել ըստ դասակարգի այսպէս. բազմութեան կողմից առաջին տեղը բռնել են արհեստաւորների որդիքը՝ որ 2497 հոգի են, յետոյ վաճառականներինը՝ 2429 հոգի, յետոյ գրագործներինը՝ 1929 հոգի, հոգևորականներինը՝ 306 հոգի, աստիճանաւորներինը՝ 173 հոգի և վերջապէս ազնուականներինը 103 հոգի։ Ուսուցիչների և վարժուհիների թիւը հասել է 344 հոգու, որոնցից 54ը եղել է քահանայ։ Տարրական 111 դպրոցների ընդհանուր եկամուտը եղել է 168,629 րուբլի 14 կոպէկ. իսկ ծախսը 143,179 րուբլի 45 կոպէկ։

Թեմերի ուսումնարանների բազմութեան կողմից աչքի են ընկնում Թիֆլիսինը և Երևանինը. իսկ Արցախի ընդարձակ և բազմահայ թեմն ընդ ամենը տարրական 10 դպրոց ունի։ Իսկ Արցախում թեմակալ է Մակարի ամենամօտիկ անձը և այս տարրի տարրական դպրոցների թիւը Արցախում 10ի էլ չէ հասնում։

— Մոսկովայաբնակ հարուստ Յովհաննէս Սահակեանց Յովնաննեանը, ինչպէս Ապրիլի 28ին ստացուած հեռագրից տեղեկանում ենք, կարճառօտ հիւանդութիւնից յետոյ վախճանել է։ Յովնաննեանը յայտնի հարուստ հայ է և բաւական էլ բարեգործութիւններ է արել, որոնց մէջ ամենանշանաւորն այն է, որ

Թիֆլիսում հիմնեց Ծովհաննեան դպրոցը և նրան ապահովեց նուիրելով մի ահագին չորս յարկանի քարվանսարայ, որի չէնքը մի քանի տասնեակ հազար եկամուտ է բերում միայն տարեկան և որը յատկացրած է այդ ուսումնարանին։ Ծովհաննեանը ծնուել է 1811 թուին և կրթուել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում։ Նա ընտանեկան կողմից շատ դժբաղդ եղաւ։ Նրա ոչ աղջկերքն և ոչ էլ որդին անփոյթ եղան իրենց հօր արժանի ժառանգ լինել։ Եթէ նրա ահագին հարստութիւնը անցնի ժառանգորդների ձեռքն առանց ո և է պայմանի կամ հսկողութեան, հաստատ կարելի է ասել որ կորած է. բայց եթէ կտակով տրամադրած լինի նաև յօդուտ Ազգին, այդ կ'լինէր նրա շատ խոհեմ քայլերից մինը։

— Թիֆլիսի նահանգական դանձարանին դանձապետ Իվանովը 315,000 րուբլի յափշտակելով փախեր է՝ յայտնի չէ՝ թէ ո՞ւր։ Ասում են որ յափշտակուած դումարը ոչ թէ 315 հազար է, այլ մի մլիոն. 315 հազարը միայն վերջին նուազ յափշտակածն է։

Մայիս.

* * *

ՊՕԼՈՑ ԱՑԺՄԵԱՆՆԵՐԸ

Եթէ չունիմ Աբ. Մոլչ հաղորդելիք յաւերժականներ, դէթ կան այժմեաններ, զոր չգիտեմ ինչ տեսակ յաւերժութիւն առանդելու համար կ'ջղեմ ձեղ։ Այժմեանները կ'վխտան հոս չորս կողմն և յաւերժութեան հովեր կ'առնուն կուտան, բայց շուտով կ'ածննան և հադիւ սիրուելու չափ դրչի տակ կ'իյնան... Այս պղպջաբարոյ այժմեանները չեմ որ ելան օդ մը երկուքու հէս մլիոն մոթիւներու սուինաց անտառն հէքիյաթին պատմած դևերուն նման՝ պնթիւկ ցցուցին մեղի, որպէս զի զառամ մը՝ քուէից պանծալի թուանչանով մը, Լուսաւորչաց դահը ելնէ տքտքալով։ Էմմիածնական հնգհատանից կռնակ տուաւ Պօլոյ մուժիկամիտ խոռանեակն։ Պառաւն հասաւ վերջապէս մոքսին. Աբելէ ծալի զարկաւ, խայտաց Աբրահամ, շունչ առաւ Արտաշաղդ իւր վիրապէն, թէ ալ պոլշեվիկեան չղթաները մսխեցնող

վերջին վերոյ ընտրեալ հաւատարիմն եկած է, ընդ քառասնից աչխարհի՝ չորս հողմերով հրովարտակներ արձակուեցան, պատուէր հրամանի տալ Հայոց ռամիկ գաւառներուն և պարտաւորել անոնց ձեռքերն որ սկ ուռնադ ղորդ կառաններով չծեծեն սալերը։ Արտաւազդ պիտի բրցնէ ղմէ անեն և Արտաւան աչխարհի վրայ պիտի փլցնէ։ Եւ եղև երեկոյ և եղև առաւօտ և ահա յաւելաւ օր մ՚ալ յաւասդաւ պատրանաց։ Արտաւազդայ ղմէայից վրայ նոր անուրներ աւելցան։ Հայոց ռաքդան իրենց միտը մնաց։ Կովկասու ղմէայականին լեարդը կըծող մէկ անգղին վրայ տասնհինգեր և քառասուններ բազմատկեցան։ Այս թիւերուն ծնունդն, նորադանդ լուսաւորիչն՝ Նիկիոյ Հանդանակն Գաղկեդոնեան հանդանակովը՝ Պալաժէնեայով ուր ուրեմն պատուաստեց։ Մելեպինեան խն ինչ քառասունեօթնամեայ ալ երիցս խաչակնքեց Հայոց կաթողիկոսութեան գերեզմանը, որ յայսմհետէ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից անչարժ, անքակ, անմեռնամերձենալի և անփոխադրելի ի՛ջի կնիքն այն քացառական դերաքրիստոսին, (Ա.Գ՚)։

Սակայն Մանիսայի քարոզիչն, հոս ի Պչիկճաչ գալէն յետոյ, Եըչմէի սուրոռէն կրկին սկսաւ աւելի դառնացնել կաթողիկոսական պատրանաց հեգնութիւնը, և Պօլսոյ բոլոր խըղդրոց այժմէականութիւնը գերազանցել, յաւերժեան լինելու չափ։ Շահպաղեանի կաթողիկոսական նոր ՃՃոռաանոսն առիւծի մռնչիւնէ աւելի սարսռեց մեր մայրաքաղաքը։ Ո՛ր անխոհեմ լիզեց բոցուն ղմէաններն և Մանիսայի քարանձաւէն արձակեց այս անզուսպ Արտաւազդը, որ Պատրիարքարան և Էջմիածինը լեզուպատառ իրար անցընէ։ Բայց Պօլսոյ հայ Մռնչիւոը վաղն կամ միւս օր՝ մեր այս պանական երկիւղէն կ՚ճողոպրէ, առաջ Աստուած, իւր բացառական «հաւատամքն» երիցս խաչակնքելով և աչխարհի չորս կողմն անդաստան պտըտելով կ՚բացագանչէ. «Ո՛վ ժողովուրդ հայոց, որպէս զիժս և զքարբս խոցեցէք զլսելիս ձեր, և մի ունկն լսոնարհեցուցեալ կախարդեսիք յայս նոր թովչէն։ Նէոն է Շահպաղեան. մի հաւատաք այդ սուտ քրիստոսին, որ տարաժամ եկեր է խախտել քաղկեդոնեան վիմին վրայ ռուսպիսկատոյց դաւանանքն մեր բացառական բացառականաւ սիրական կաթողիկոսին, սրոյն Մակ—արիոսի, որ չնորհիւ վերին Նախախնամութեան և չնորհիւ Աժենողորմած Ձարին, պիտի անցուցանէ գլուխ ընդ հուր և ընդ ջուր, որ խըղխըղդներու, ցօղդուզներու անապատներուն մէջ, էլարուզի սագ-

նախատ բարձունքներէն մանանայ և լորամարգի տեղատարափ պիտի թափիփչէ, և Ս. Պետրոսի բալլիքը նոր ծախելով՝ Լուսաւորչայ ֆեչերուն փոքրիկ ծիրանաւորի մը ձեռք էլլմիածնայ կաթողիկէին դռներն ու պատերը ջնջափոշով ջանք վճռէկ կոտրտելու պէս պիտի կոտրտէ և բանայ մեր առջև Աւետեայց երկրին կանչուն դռները»։

* * *

Պօլսոյ ոչխմեաններէն է նաև Կրօնական Ծաղովոյ հրաժարիլը։ Ո՞ր կրօնական՝ իրրև հայոց Եկեղեցւոյ վարդապետ, կրնայ անսասան խղճով մտիկ ընել Շահպաղեանի տարօրինակ փողչն և Գարրիէլեան ալխարհակուսէր չեփորէն աւելի ահեղ պատգամներ և նետել առաջին քարը։ Մանկասիրի ջարոզիչ՝ Աննիքաշեայ և Սիրափոնի պէս գաւառական գաղտնիքը՝ թշնամին թշնամուն հոգին վրայ զարնել։ Կեդրոնն սկսաւ նահանջի թրմբուկն հարկանել ամեն գծերու վրայ։ Վարչութեան Նախագահը, Ատենապետը և Կրօնական Ծաղովը իրարու ետև կ'հրաժարին ահա։ Այս հրաժարմանց ո՞րն անկեղծ, ո՞րը կեղծ է արդեօք։ Ծաղովինը բնական և օրինական է, զի տարին լմնցած է։ Վարչապետ՝ Սիմոն պէյինը անկեղծ է. իսկ Պատրիարքինը կեղծ։ Պարթևեան նետ մ'է այն. ո՛ դիտէ ո՞ւմ ընդդէմ։ Եւ ահա ինչո՞ւ։

Աղգային Ծաղովը՝ Պատրիարքին հրաժարականը ձայն հաւանութեամբ ընդունեց և վճռարար Երուսաղիմայ անդարձ ճամբան ցցուց, այն ժամուն՝ որ յղեց առ Բ. Դուռն։ Պատրիարքը՝ մաղաքիայէն առաջ վազեց ու անոր հասնելէն առաջ ինքն հասաւ կայսեր քով։ Ցոյժասած ճշմարտութիւն մ'էր արդէն թէ՝ կայսեր դահակալութիւնն չնորհաւորելու երթալուն հետևեալ օրը ըսուած էր Պատրիարքին թէ Պալատէն պիտի ոչ-ըսէ և այս ուղևորութիւնն պատճառն ալ անխափանելի փապնիկ մը չէր։ Ձենք դիտեր թէ մեր վիճաբանը և մեր Ամենապատիւն ինչեր խօսած են մեր Աղգին համար։ Սակայն կայսերական տեսակցութեան հետևեալ օրը՝ Աբէնէլ աղգային պաշտօնական վաւերական լոյս կարդին մէջ՝ յայտարարեց թէ՝ «Վեհ. Սուլթանը բացարձակապէս մերժեր է Պատրիարքին հրաժարականը և երկիցս՝ թէ՛ անձամբ և թէ Պալատան մեծ պաշտօնեայի մը միջոցաւ, յանձնարարեր է կրկին. «Կ'ուզեմ որ շարունակէ պատրիարքական պաշտօնդ գործդ գոհ եմ և ինչպէս կ'լսեմ. «Աղգն ալ

գոհ էր։ Զատկի մօտ կ՚պատահէր այս դէպքը։ Իսկ Ս. Պատրիարքը Զատկի առթիւ՝ Ազգին պաշտօնական մարմնոց շնորհաւորութիւնները ընդունելու առեն, յայտարարեց թէ՝ Աբէլէքի գրածը սուտ ու սխալ է. թէ կայսրն այն ոճով չէ խօսած իրեն հետ։ Արդ՝ կամ Աբէլէք կ՚սուտէր կամ Պատրիարքը։ Եթէ Աբէլէք կ՚սուտէր ինչո՞ւ Պատրիարքը չհերքեց, քանի որ պետական խօսքեր ծանաճռելով հրատարակելը՝ պետական յանցանք գործելու չափ ծանրակշիռ է. եթէ Պատրիարքը կ՚սուտէր Ազգին և անոր պաշտօնական մարմնոյն. ինչո՞ւ լսելովն հանդերձ չյաղթեց Աբէլէք, որ իւր պատգամներուն վրայ մակս չափ թերահաւատողին է. բան մի վեր ձեռնոցը խիզախօրէն նետելու չափ ամլամբակ և ոտոտքի յառաջ կ՚վազէ։ Լուսթիւնը հաւանութիւն կ՚ենթադրէ, կ՚ըսէ հասարակ առածը։ Սակայն կարելի բան է՝ Կայսեր չըսածը՝ յանուն Կայսեր ըսած՝ և Պատրիարքի մը չըսածը՝ յանուն Պատրիարքի ըսած հաշկել։ Մենք հաւատացողներէն ենք թէ մեր վեհ. կայսրն՝ ըստ օրում դեռ Ազգային ժողովոյ որոշումն և վարչութեան հաղորդեան չտեսած, չլսած՝ տեսեր, լսեր էր Պատրիարքը, բնական էր որ անոր հրաժարում յայտնող խօսից դէմ մերժում յայտնող խօսքեր ըրած լինի։ Այս առաջին պատճառ։ Երկրորդ՝ վեհապետի վայել բարձրագոյն քաղաքավարութիւնն ալ պատճառ մ՚էր Պատրիարքին հրաժարումը մերժելու, և այսու քաղաքավարական վերին դաս մ՚ալ տալ Պատրիարքին թէ՝ բարձրագոյն պաշտօնէից հրաժարականն համճեպով և անմիջապէս ընդունելն՝ ոչ միայն վերին այլ տարրական քաղաքավարութեան իսկ հակառակ է . . . ։ Եթէ Ազգն իւր Պօլսոյ ներկայ Պատրիարքէն գոհ լինէր, Ազգ. ժողովն ուրիշ եպիսկոպոս մը Երուսաղէմայ պատրիարք կ՚կարգէր և վեհապետեանի հրաժարականը կ՚մերժէր։ Բայց ո՛չ, ինչպէս ժողովն, նոյնպէս և վեհ. Սուլթանն կ՚ընդունին ի վերջ վեհապետեանի հրաժարականն՝ ըստ Սահմանադրութեան, և Աբէլէքի հրատարակած լուրն հրաժարականի մասին, ինչ իրական արժէք ունենալը կ՚իմացուի։

* * *

Կ՚մնայ տեսնել թէ վեհապետեան Սրբազանը երբ պիտի մեկնի, և յաջորդակամ պիտի մեկնի։ Որքան հեշտ էր վեհապետեանի թողուլ կարինը անդ կամակ և Առաջնորդանոցը անկատած, երու առաջմայ վանքը քաշուելու համար, նոյնքան

հեչա չէ Պոլիսն ու իր Պատրիարքարանը թողուլ առ քաղաքը դնալու համար, ուր վանահայրական պատրիարքութիւնը պահ մի չքնաղ կրան մահափայտին աւելի ծանրարեռն կը կշռէ իր ուժատպատ աւերուն վրայ։ Ներին Ազնուազարուժութիւնը կ'յուսադրարի, կ'ըսեն, Գոզլումսի կամ Զիմմեններց լծին անձուկն աւելի Տաճատի լծին վարպատոյն անձկալեօքը։ Ս. Յակոբայ վանքէն աւելի Գում-Գափուի Պատրիարքարանը յարմարագոյն է դէպ ի Մայր-Աթոռն ապահովապէս տանող ուղեղն գտնուիլը չխնդալու. որով՝ գիտցող յաղթութիւն, միտհնդան ալբ մնալու և զոր, Գաղրպէկի նաւանտառ կարգին նըմանող, յոռիական նօտռաններու վոմ որիկներէն չվերբին մակոյկ, ջարդարարդ խորտակուած տեսնելու դժբաղդութեան չհանդիպելու համար, ամեն նախահոգ հանդերձանք անցերի կազմակերպելու վրայ է եղեր։ Եւ այս կազմակերպութեան ամրողջացման համար անշուշտ ժամանակի և . . . պէտք կայ. և այդ ժամանակը չահելու համար Ներին Ազնուազարուժեան հոգանոնալները արդարացնող փաստեր և մեղջցներ պէտք են, ինչ որ ամենագէրչէ մեր մէջ բարձրագոյն Աթոռէ մը բարձրագոյն պահերու հետ պատգամ տալու առնելու Մենաշնորհալի մը համարյ

Կ'ըսեն նաև թէ՝ Ս. Պատրիարքն երբ կայսերական տեսակցութենէ Պատրիարքարան վերադարձեր է, Արք. Վարչութիւնն իր դիմաց Եսան Ծոզովոյ կ'տեչ գՊիմաքսեան Ամրազանն առ Պատրիարքն, որ հաճի հաղորդել կայսերական տեսակցութեան արդիւնքը ժողովոյն։ Ս. Պատրիարքին միակ պատասխանը կ'լինէ ֆրէնչերէն չեմ մը, առ Պիմաքսեան որ ն Ատենապետն է Կրօն. ժողովոյն և որ Մակարիոսին կամաժիկոսութիւնը նորոգարար մերժած էր իւր լսաճոխ էպային մէջ առ անվեհեր ձայնարկութեամբ աղազակելով Նուրեան վարչութեան երեսն ի վեր թէ՝ «Աւաղ, 1800 տարուան Հայոց եկեղեցին ծախեցիք». Պոլսոյ և բոլոր Հայոց կրօնական դատաստանը մէջ՝ տաղանդովը, հմրաւտիւնովն ու գործունէութեամբ փայլող առաջնակարգ եպիսկոպոսներէն միոյն այս միայնակ Աչալուշը բաւ է բացատրելու քաջատեսակ հռչակել Ազգին, Եկեղեցւոյն և պատմութեան առջև . . . . ։ Ի՞նչ և է. Ս. Պատրիարքը թո՛ղ գաղտնի պահէ շատ բաներ որ Ազգին կ'վերաբերին, բայց երբ Վարչութիւնն նոր Պատրիարք փնտռելու կ'ելնէ, նախկին Պատրիարքն իրրև խորհուրդ Վարչութեան և մաերմաց ականջն ի վար կ'փսփսայ թէ՝ «Պապչաւ ընդունելի եղիսկոպոսը ոչոչ է կառավարութեան բացառիկ վտանգա-

ընդանը ջրաւոյ լինի, և երբեք ինչ անցելոյն վրայ ո և է հակապետական դէ ոմանց կասկած հրաւիրած չլինի», որ հակառակ պարագայի մէջ՝ պատրիարքական նոր ընտրութիւնն ալ պետական վնասի կարելի է որ հանդիպի և խնդիրն պատրիարքական այս տարաձայնութեան չափազանց ինչ ազդուրէ և բոլոր, այս յայտնի է որ կրնայ ծառայել անոնց որ կամ ժողովականաց խնդրոյն մէջ առնելի դեր մը կատարելին։ Արդէն շատեր կարծիք կ'յայտնեն թէ՝ Պատրիարքն կամ իր համախոհք դիտմամբ մեր բարի վեհապետին մտքէն չանցած վնասէ կասկածն իրենց մտքէն կ'անցնեն և կ'ձանձնեն, որպէս զի՝ եթէ երբեք ոչ պիսի բան մը պատահի, առաջնորդներն իրաւունք ստանան ըսելու. «Դուք հակառակ, որ առաջին վնասն կ'պատասխանք, ահա տեսէք, որ վնաս Պոլիսն ալ ունի իրն պատրիարքական ընտրութեան մէջ»։ Բայց եթէ երբեք այսպիսի բան մը պատահի, ո՞վ է մեղաւորն, ո՞չ ապաքէն անոնք որ երկու եկեղեցի ունին, մին ի Բաղտատ և միւսն ի Թուրքիա, և երկու կին ու ջահ. ինչ հարաւածներ ոչ ընդունին կամ ժողովականական իրաւունքներ՝ անոնց աչքին չատ թեթև կ'երևան, մինչդեռ Թուրքիոյ մէջ դերեզմանի ոսկորներ կ'դերաձշեն Ս. Ընդհ. ամենէ սուրբ իրաւունքներն։ Ո՛ղիտէ, յանցանքն յանցանքով ծածկելու նոր քաղաքագիտութեամբ, որու այժ կ'տայ անշուշտ մեր վազեմի թշնամին, կ'ուզուի ներոյ աշնակութիւնն հատատուել երկու կղի և չարի մէջ, այնպէս որ ալ ևս գանգատի տեղի չմնայ։ Զարմանալի չմնայ ուրեմն եթէ այն Պատրիարքին օրով՝ երբ Ազգընարի կամ ժողովականութեան՝ Ս. Ընդհ. մէջ չորս ամիս խուխա նըստեցնելով Մակարիոսը ծնոտ ջնջել ձուն ածեցին, նմանապէս ալ՝ Պոլսոյ մէջ՝ պատրիարքութիւնը նման կամ աննման հաշիւներով քանի մ'ամիս խուխա նստեցնելով պատրիարքական վնասմը ածէ։ Գալոց է դայթակղութիւն, բայց վայ մարդուն այնմիկ որ ձեռն պայցէ։

Ահա Պոլսոյ այժմեաններէն մէկ քանին ձեզ՝ իբր մասիսի ճաճանչաւոր ծպտիններ։ Այս տարի մայիսը դեկտեմբերի չափ անձրևաւոր և փետրուարի չափ ցուրտ է ի Պոլիս։ Մեր զարմանաք և դուք միշտավարիս պէս ցրտին լուրեր հաղորդելուս համար։ Թէև դուք տաք երկրի զաւակ՝ չեք սխալիր անշուշտ հանդէպ յոնիական վայելչազգեստ և հոյակապ ճարտարապետութեան, սակայն կրկնածալ և բազմանիստ ծածկոյթն ոճը սիրտդ տեղն բերէ։

Ցանիա, Ն. Պոլիս։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

Ներկայ ամսոյս 20ին դպրոցական պարզ ու վայելուչ հանդէս մը կատարուեցաւ տեղւոյս Ս. Հռիփս. վարժարանի մեծ սրահին մէջ։ Նոյն օրն Ս. Հռիփսիմեան կուսանաց ժողովն էր և միանգամայն տարեկան հարցաքննութիւնները նոյն օրը կ'ուսարտէին։ Պատ. Ուսուցն. խորհրդոյ որոշման համեմատ՝ թէ կուսանաց ժողովն և թէ դպրոցական հանդէսն միասին կատարելու համար՝ կարևոր պատրաստութիւնները արդէն եղած էին։ վարժարանի մեծ սրահին մէջ սեղանի վրայ դրուած էին ի տես՝ հռիփսիմեան ասանուհեաց այլ և այլ ընտիր ձեռագործներն, ինչպէս նաեւ գծագրած պատկերներն։ վարժարանը դափնիներով զարդարուած էր։ Աւրժ. ցեղապահ հօր մի-ջոցաւ ծանուցուած էր արդէն եկեղեցւոյ բեմէն Աւրդոյ Հասարակութեան, որ երկուշաբթի օր առաւօտեան ժամ երդումենէ ետք պիտի կատարուի հանդէսը։ Նոյն օրն բաղմաթիւ ազնուագք և արք, Պատ. Հոգաբար և կրթասէր ընկերութենանց, Ազգ. վարչութեան և Ուսումն. խորհրդոյ անդամներէն ոմանք ներկայ էին հանդիսին։ կրօնական պարտաղութենէ ետք՝ հռիփսիմեան վարժարանի մի քանի աշակերտուհիներ ճառեր և ոտանաւորներ արտասանեցին, մինչդեռ դպիրներն՝ դաշնակման միջոցին, այլ և այլ ազգային տաղեր և առ Վհ. Սուլթան ձօնեալ երգն երգեցին։ Ապա ազգ. վարժարանաց Տեսուչ՝ Պ. Մամուրեան, վարժարանաց միամեայ ընթացից վրայ համառօտ Տեղեկագիր մը կարդաց, զոր վարը կ'հրատարակենք։

Հանդէսն աւարտելէն ետև՝ ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականաց՝ Ջ դասարանի աշակերտուհեաց քննութիւնը չարունակուեցաւ։ փնեղի առարկան էր՝ Պատմութիւն իմաստասիրութեան սրու մէջ դրեթէ բո-

լոր աշակերտուհիներն գովեստից արժանի հանդիսացան։ Այնուհետև հանդիսականներն աչքէ անցուցին ձեռագործներն և անոնց առջև՝ ձեռագիտութեան հետևող աշակերտուհիներն այս ճիւղին մէջ իրենց յառաջդիմութեան ղդալի նշանները ցոյց տուին՝ անվիճապէս ձևելով զանազան հանդերձեղէնները։

Բոլոր հանդիսականներն՝ այս ազգային պարզ և սրբատառուչ հանդիսին քաղցր տպաւորութեան ներքև՝ ուրախ ղուարթ մեկնեցան վարժարանէն։

Ա. Ասատիկ Պ. Տեսուչին արտատանած Տեղեկութիւն.

Աղնիւ Հանդիսականք,

Ազգային վարժարանաց հրապարակային հարցաքննութեանց վախճանն և Հռիփսիմեան վարժարանի տօնն մի և նոյն օրը դալով՝ Պատ. Ուսումնական Խորհուրդն՝ այս ղուգադիպութենէ յորդորուած, որոշեց միասին կատարել տօնախմբութիւնն ու դպրոցական հանդէսն արժանավայել պարզութեամբ։ Այս որոշման համեմատ՝ այսօր համախմբեալ սոյն ազգային յարկին ներքև՝ կրօնական և կրթական պարտաւորութիւն մը կատարելու կոչուած ենք։ Այս պարտաւորութիւնն այնքան նուիրական ու խորհրդաւոր է, որքան որ Եկեղեցին ու Դպրոցը Հայոց մէջ կարևոր պաշտօններ կատարելու սահմանուած են։ Վարժարանիս պաշտպան Հռիփսիմեանց յիշատակն ու նահատակութիւնն, զոր Եկեղեցին կ'տօնէ, այդ կուսանաց հաւատարմութեան, համբերատարութեան և անձնազոհութեան տխլարն, որ հայ իգական սեռի իտէալն պարտի լինիլ, մինչ մեր սրտին մէջ կ'գրգռեն խորին մեծարանաց զգացումներ, երախտագիտութեան ոչ նուազ ջերմագին յուզմունք և հայրենի տեսիլներ կ'զրգռէ մեր հոգւոյն և մտքին մէջ անչուշտ հայ կրթութեան և դպրականութեան հայրն, Սուրբն Մեսրոպ։

Եթէ Եկեղեցին ընդհանրապէս երկնային ճշմարտութեամբ հոգիները սրբելու, և վարժարանն դիտութեան ջահով միտքերը լուսաւորելու վեմ պաշտօնն ունին, այդ պաշտօնն յատկապէս Հայոց համար, որ կարօտ են բարոյական և մտային միաւորութեան, անհրաժեշտ պէտք մը կ'գառնայ։ Մեր կենաց ամեն ճամփայ և յաջող պարագայից մէջ Եկեղեցւոյն հովանւոյն

ներքև սփռմանք, և վարժարանի տահին մէջ լոյս և յոյս կը-
վինաւնէք, երկու հզօր լծակներ որ Ազգն ի կեպ իր ճակատա-
գիրը կրնան առաջնորդել եթէ դանուն յենադէտներ արդարա-
սիրութեան, հայրենասիրութեան և պետասիրութեան մէջ: Ու-
սի ապրուստնութեան գործ կ'կատարէ Նոյ ժողովուրդն երբ իր
բարոյական, մտաւոր և նիւթական ոյժերն դիւաւորապէս այս
հասատատութեանց պայծառութեան կ'նուիրէ և անանց ուղղու-
թեան և վիճակին չնորհար անոտարբեր: Արդ էն, ինչպէս վարչային,
նոյնպէս կրթական գործոց գլուխը գտնուած այն ազգասիրներն
որ պատուոյ և պարտաւորութեան պաշտօնի ունին, հայրենա-
սիրութեան և անձնասիրութեան սրինակ կ'հանդիսանան և բնա-
պէս կ'յուսան որ արդարասիրութեամբ կ'քննուին ու կ'գնահա-
տուին իրենց ճգունքն և նպատակ ազգային զարգացման: Թէ-
պէտև Պատ. Աւտումնական Խորհուրդն առ Պաղատ սկսան ժողովել
ներկայելի Տեղեկագրով սկիզբ պարզել կրթութեան վիճակոյ
ընթացքն, սակայն ներսի ինձ եւս, իրև առաջ Ազգ. Վարժարանաց, մի քանի խօսք բանել այս հանգիսաւոր օրս:

Աշխ. Քաղ. ժողովն 1887ին գործադրական չրջանի ակիւռներն ի պաշտօն կ'կոչէ Ստամ. Խորհուրդն, որոց անդամներն են, Տեարք Լուսիկեմ Եփ. Պալեաճեան, որ Վարչութեան թեկնած-ճագրին յորդորանաց ընկալանելով՝ վերընտրութիւնը կ'ընդունի, Կարապետ Եփ. Յակոբեան և Մեսրոպ Եփ. Սիմեոնեան: Նորընտիր Խորհուրդն իր գիւանը կ'կազմէ և՝ան իրացուց գործի կ'ըսկսի ընդ Աստենապետութեամբ Պալեաճեան Եփեսեան, որ արդէն վերահասու և փորձառու կրթական խնդրոց մէջ և վարչարատնագ ներքին վիճակին քաջատեղեակ իր երկարեայ պաշտօնավարութեամբն՝ արագաց իր էր իր պաշտօնակցաց աշակցութեամբ ուղղել ինչ որ կար թերի, և նոր ժիւռմ մը տալ կրթութեան գործին: Անխոնջ ուշադրութեամբ Խորհուրդն ի քննին կ'առնու նախորդ չրջանի Ատեանց արձանագրութիւնները, որոնցմէ դասախօսութեանց ժամերն, վիճակացուցակներն ու ժամակոցներն, ինչպէս նաև պաշտօնէից աշխատութեան արդիւնքն, ամսականաց ցուցակն ու եզմատոյցն, և յետ խորհրդածութեան, կարևոր գտած փոփոխութիւնները կ'որոշէ: Այս առթիւ նշանակելի են Հալիմեանի և Մեսրոպեան ատենադպրաց ծրագրական զրամուծները փորձ ինչ թեթևացնելու մտաք մի քանի ուսումնից չնորհանական գասերու մի մի ժամու վերածումն, երկու ժամ պոլնհանելով Մեսր. ատենադպ. համար միայն Թուաբանա-

նութեան դատախազութիւնն. բարձրագոյն դատարանաց մի քանի դատաւորներ Գատարատարանի յատկացնելը, ուսանց ամսականաց վրայ վերադրութիւնն, ջրանաերկնի և պաշտակի հրաժարեալ վարժուհեաց անդ նորին կարգելն: Խորհուրդը կ'յայտնի նաև Ուսումնարանաց Ջ դասարանները վերակազմել և ի գործ կ'դնել նախորդ Ուսումն. Խորհրդոյ մի որոշումն որ կ'արամադրէ հարցաքննութեանց ներկայ չգանուողներն իրենց նախկին դասարանաց մէջ պահել, իրև պատիժ պարտազանցութեան, եթէ անկարող լինին իրենց բացակայութիւնն արդարացնող վկայագիր բերել, և եթէ բերեն, մասնաւոր հարցաքննութեան ենթարկել:

Գատ. Խորհուրդն ներքին բարեկարգութեան, ծրագիրներու և ժամանակացոյցներու վերաբերեալ անօրէնութիւններն ընդլէն եաև կ'հրատիրէ աշակերտանցն ու աշակերտուհիներն ի վարժարանս, որ անպատ էին բացուին: Բայց դժբազդաբար նոյն միջոցին ծագելի հիւանդութիւնը սաստիկ կ'ճարակէր քաղքիս մէջ: Ազգ. Վարչութեան պատասխրին համեմատ՝ կ'որոշուի փակել վարժարանները, ինչպէս որ փակ կ'մնային օսար դպրոցներն, մինչև ցնոր անորէնութիւն: Այս դադարը կ'տևէ մինչև սեպտ. 28, երբ կ'բացուին վերստին վարժարանները և Գատ. Ուսումն. Խորհուրդն առ ծնողս ուղղեալ յայտարարութեամբ, ըստ վերոյիշեալ բժշկաց, հիւանդութեան սաստկութիւնը մեղմացած և պէտք եղած զգուշական միջոցներն ձեռք առած լինելն իմացնելով՝ յորդոր կ'արտայ որ աշակերտները վերադառնան: Սակայն նոյն պահուն մի քանի դասատուներ հիւանդութեամբ տառապելով բացակայ լինելնէ կ'տեսնին, մինչդեռ միւս կողմէ՝ սարսափելի հիւանդութեան երկիւղն սկսած աշակերտաց մուտքն ի վարժարան ժամանակ մը կեսատձգելու պատճառ կ'լինի, այնպէս որ հոկտ. սկսան վերջերը միայն վարժարաններն իրենց կանոնաւոր ընթացքը կ'սկսին: Այս դժբազդ պարագայներն, որոց առաջն առնուլ անկարելի էր, որքան որ կ'ծանդարեն պահ մը եղած կարգադրութիւններէ, բայց Գատ. Ուսումն. Խորհուրդն ամէն ջան ի գործ կ'դնէ ժամանակի կրօտասին ու վնասը դարմանել ըստ կարի, թէ ուսուցչական մարմնոյն և թէ ուսանողաց խթան պատճէներնեը տալով կրկնապատկել իրենց ջանքն ու եռանդն, որպէս զի, ըստ ծրագրաց մէն մի դասարանի յատկացեալ ուսմունքն աւարտուին՝ մինչև դպրոցական ջրջանի վերջը:

Ապարդիւն չեղան այսքան հոգ ու խնամք և քառամսեայ քննութիւնն ընդհանրապէս ցոյց տուաւ աշխատասիրութեան և կանոնաւորութեան նշաններ։ Պատ. Ուսումն. Խորհուրդն պարտ ու պատշաճը կ՚տեսնէ նաև թոշակաց բաշխման և դասճման համար. Պատ. Հոգ. Ընկերութեան խորհրդով Տիկնանց նոր Հոգաբարձութիւն մը կ՚ընտրէ, հրաժարեալ Հոգաբարձութեան տեղ, նոյնպէս Օր. Վերոնիքա Քէչիշեանի խնդիրն, որով կ՚առաջարկէր ձեռագործոց պատրաստութեան և թէ առողջապահիկ պայմանաց մասին յատուկ խնամք կ՚տարուի։

Պատ. Ուսումն. Խորհրդոյ անդամք և յատկապէս Ատենապետ Էֆէնտի սովորական նիստի օրերէ զատ՝ գրեթէ ամեն օր կ՚այցելէին վարժարաններն և ստէպ դասախօսութեանց ունկնդիր լինելով՝ ուսանողաց խրախոյս, ուսուցչաց կարևոր պատուէրներ և յառաջադէմ աշակերտաց ու աշակերտուհեաց ի նշան գոհունակութեան մրցանակ կ՚նուիրէին։ Միայն ցաւ է մեզ յայտնել որ այսքան հոգ տարութեան և յորդորանաց հակառակ Զ դասարանի աշակերտներէն ոմանք, քաջալերուելով թերևս ծնողաց անտարբերութենէ, կ՚դժկամակէին հետևիլ նոյն դասարանի ծրագրին և լոկ լեզուներու ուսումն կարևոր կ՚դատէին։ Խորհուրդն ծնողաց աջակցութեան ընդունայն դիմելէն ետև՝ կ՚ստիպուի ի գործ դնել զարժանն։ Այսպէս նոյն դասարանի աշակերտներուն թիւն 41 կ՚իջնէ ներկայ չրջանին մէջ, որ իրրև ընթացաւարտ վկայադիր պիտի ընդունին, ինչպէս նաև Հոխտ. վարժարանի Զ դասարանի 10 աշակերտուհիներն։

Աղնիւ հանդիսականք, այսօր կ՚աւարտին տարեկան հարցաքննութիւններն, որ քսան օր տևեցին։ Արժ. Տեղապահ Հայրն քանիցս իր ներկայութեամբ քաջալերեց ուսանողներն։ Իրրև քննիչ ներկայ գտնուող ուսումնական ազդայիններ, իրրև այցելու ունկնդիր ծնողք տեսան և իրենց գոհունակութիւնը չերմագին յայտնեցին առ Պատ. Ուսումն. Խորհուրդն և առ Տեսչութիւնն կատարուած յառաջդիմութեան վրայ. տեսան վերջապէս որ ազգային վարժարաններն ունին ազգային դրօշմ, ազգային ոգի, ազգային հիմնական կրթութեան կարևոր տարերքն՝ որոցմէ զուրկ են օտարաց դպրոցները։ Այս յառաջդիմութեան վրայ խօսիլ ինձ չպատկանիր. եթէ այն մասամբ պիտի ունք

է աշակերտաց և աշակերտուհեաց ջանասիրութեան և դասատուաց ու վարժուհեաց խղճամիտ պարտականարութեան, մեծ մասամբ վերագրելի է Պատ. Ուսումնական Խորհրդոյ անձանձիր և լուսամիտ հսկողութեան, որով ցոյց տուաւ թէ որքան կ'սիրէ ազգային մանկտին, և այդ սէրն չէ թէ խօսքով, այլ իր անձնուէր ծառայութեամբն և ստէպ անձնական գործոց զոհողութեամբն կ'յայտնէր։ Այդ սէրն է ահա որ դաստիարակութեան գործին մէջ հրաշքներ կ'գործէ, որ մանկավարժական արուեստին գրեթէ հաւասարաչափ կարևորութիւն ունի, որ կ'թեթևացնէ կրթութեան ծանր պաշտօնը և կ'յորդորէ իսկ, անտես առնելով անիրաւ յարձակումներ, մինչև իսկ ապերախտութեան ցաւալի ցոյցեր, անվրդով կատարել նուիրական պարտաւորութիւն մը։ Այս կատարեց Պատ. Ուսումն. Խորհուրդն։ Եթէ ես չհռչակեմ այս ճշմարտութիւնը, Մեսր. տանուց և Հոխիս. տանհետաց մատաղ և երախտագէտ սիրտերը պիտի բողբոջեն, իրենց ղպրոցական կենաց յիշատակներն իրև մշտարբրբտ վկաներ պիտի խօսին։ Ուստի դուք, սիրելի և ազնիւ աշակերտներս և աշակերտուհիներս, դուք որ ձեր պարզ և անմեղ սրտով լաւ ևս կ'գնահատէք այն անձնուիրութիւնն ու հոգատարութիւնն որ նպատակ ունին ձեր երջանկութիւնն, դուք անշուշտ անջնջելի պիտի պահէք ձեր ծնողաց սիրոյն հետ, ձեզի համար չունչ, հոգի և աչքի լոյս թափող անձերու յիշատակն, և այդ անձերուն մէջ տարօրօք երիցագոյնս, անսպառ մխիթարութեան աղբիւր և արիւթեան ճարակ մը պիտի դանեմ ձեր յառաջադէմ ընթացից և որդիական սիրոյն մէջ՝ կենաց ասպարիզին յարակից եղող ամեն դառնութեանց դէմ։

Մ. ԹԱՄՈՒՐԵԱՆ

ՎԱՍԻՄ. ԹԱԳԻՈՐ ՓԱՇԱ ՅԱԿՈԲԵԱՆ

Արդէն առիթ ունեցած ենք խօսիլ մեր ազնուահոգի հայրենակից՝ Վասիմ. Թագւոր փաշա Յակոբեանի ազգասիրական գործոց վրայ։ Արդէն Աղէքսանդրիոյ հայոց եկեղեցին նոր պայծառութիւն և տեղւոյն ազգային գործերն կանոնաւոր և արդիւ-

նաւոր ուղղութիւն մը ստացած են Նորին Վսեմութեան առա-
տասիրտ հոգածութեան շնորհիւ։ Իր բարձր պաշտպանութիւնը
տարածելով և Գահիրէի ազգային հաստատութեանց վրայ, ար-
դէն եկեղեցին կ'նորոգուի, դպրոցը կ'բարեկարգուի և ազգ-
կալուածոց մատակարարութիւնն հաստատուն հիման վրայ կը-
դրուի։ Վսեմ. Թագւոր փաշա չմոռնար երբէք և իր բնիկ եր-
կիրն և իր բարերարութեան շնորհներն, ինչպէս ամեն տարի,
նոյնպէս այս տարի վայելեցին՝ Զատկի տօնի առթիւ՝ բազմա-
թիւ ալքատ ընտանիքներ. Ազգն որ այնքան կարօտ է նիւթա-
կան և բարոյական ձեռնտուութեան, անշուշտ խորին երախտա-
դիտութեամբ կ'ընդունի Վսեմ. Թագւոր փաշայի անգնահա-
տելի նուէրներն։ Այս մեծանուն հայկազնն իր ընկերական և
քաղաքական դիրքովն ևս մեծ հռչակ ունի և ազդեցութիւն օ-
տարաց մէջ, այնպէս որ ոչ միայն տեղական Կառավարութիւնն
այլ և օտար մեծ Տէրութիւններն դնահատելով իրաւամբ իր մա-
տուցած ծառայութիւններն, ստէպ պատուած են և կ'պատուեն
չքանչաններով այդ անուանի անձնաւորութիւնը։

Ուստի՝ օտար լրագիրներու մէջ այս օրերս կ'կարդանք թէ
Գերմանիոյ Վեհ. Կայսրն Վսեմ. Թագւոր փաշա Յակոբեանի
շնորհեր է Գերմանական Թագի աստեղազարդ չքանչանի երկրորդ
աստիճանը։ Այս շնորհն, որ մեծ նշանակութիւն ունի, բոլոր
ազգայնոց համար ուրախակցութեան առիթ մ'է և եթէ Հայք
միայն ունին երախտագիտական ցոյցեր առ Վսեմ. Թագւոր փա-
շա, օտար տէրութիւնք զգալի նշաններով կ'յայտնեն իրենց գո-
հունակութիւնը։

ԼՐԱԳԻ

Ռուսեռւիեան Գեր. Գէորգ Վարդապետ, նախորդ Պատրիարքա-
կան փոխանորդ, որոյ նիւթական անձուկ վիճակին վրայ ուշադրութիւն
հրաւիրած էին նոյն իսկ օտարազգի թերթերն, կայս. Իրատէի մը համե-
մատ սկսած է 1000 դրչ. ամսաթոշակ առանալ Ելմտական նախարարութեան
կողմէ։ — Ուրախ ենք որ Ազգային բազմաշխատ և վաստակաւոր եկեղեցա-
կան մը այսպէս արժանաւորել կերպիւ կ'վարձատրուի կայս. կառավարու-
թեան կողմէ, որ քաջ գիտե գնահատել Ազգին և Տէրութեան անձնուիրա-
բար ծառայող իր հաւատարիմ հայ հպատակներն, թէ՛ լինին եկեղեցական
և թէ աշխարհական։

Վ. սեմ. Սարգիս պէյ Պալեան, աբքունի նախկին ճարտարապետ, որ իբր ութ տարիէ ի վեր Ֆրանսա կ'բնակէր, կ. Պոլիս վերադառնալու համար կայսերական բարեհաճութեան արժանացած լինելով, ամսոյս 10ին մայրաքաղաք ժամաներ է և ուղղակի կայս. պալատ երթալով իր շնորհակալիքն մատուցեր է յառաջ կայսերական գահոյիցդ։

Երկրագունա ժամօրհայ հանդէսի Մայիս ամսոյ թիւն հրատարակուեցաւ. բովանդակութեան մէջ նշանակելի են Մեսրոպ ե Մեսրոպ հմտալից խմբագրական մը յորում գլխաւորապէս կ'ջատագովուի Հայ-Հռոմէական միացումն, և կ'խօսի Ամերիկեան հայ գաղթականութեանց միութեան տարեգործին վրայ. — Աբբէ Հաղիկեան, վերատեսուչ երջանկայիշատակ Ղազարեան դպրոցի, հմտալից յօդուած Լոնդոնի ժողովոյ, յորում կ'նկարագրուի դիտութեանց առաջադիմութիւն, դիտութեան և իմաստասիրութեան յառաջացման նպաստող մեծ հանճարներն. — Հոնորոլոգիոն Աբձանդէյ՝ ամերիկեան Հանրապետութիւն. — Նորվէգ, գողտրիկ վէպ Ա. Լուսինեանի. — Բանիւք Հրոյ հրկիզի, գեղեցիկ և հետաքրքրական ուսումնասիրութիւն Հրատ մոլորակի բնական կազմութեան վրայ, քաղուած Ֆ. Ֆլամարիոնէ՝ ի Մ. Գ. Մոզեանէ։

Հարստահարութիւն. — Թուրք թուրք լրագրին իր վերջին թիւերէն միոյն մէջ հրատարակած է Զէքուշի Արտիշ գիւղացւոց 120 տոհմագրութեամբ մեկ աղերսագիրն զոր մատուցած են Բարձր. Մեծ-Եպարքոսի։ Աշխարհաբարկուք կ'յայտարարեն թէ իրենց բնակած Արտիշ գիւղի շրջակայ մեկ քանի գիւղերու քիւրտերը մեծամեծ չարիքներ կ'հասցնեն թէ՛ իրենց գիւղին և թէ՛ շրջակայ գիւղօրէից բնակիչներուն. թէ իրենց պատիւ կ'բռնաբարուի, իրենց ստացուածքն ու գոյքերը կ'գրաւեն ու կ'սպրեն, ինչքերը կ'կողոպտեն, իրենց ձեռքն ինկած գիւղացիներն անգթօրէն կ'տանջեն. թէ այս չարիքներն զորս չորս-հինգ տարի առաջ գիւղերնց կ'գործէին՝ այժմ սկսած են ցերեկ ժամանակ գործել և թէ գիւղացիք ստիպուած են այս չարագործներուն երեսէն հեռանալ անոր։ Ի վերջոյ կ'խնդրեն Նորին Բարձրութենէն որ եթէ անկարելի լինի դերնիք ազատել այդ քիւրտերու չարագործութիւններէն, ուրիշ տեղ մը ցոյց տրուի իրենց՝ բնակութիւն հաստատելու համար։

Ծատագայի Առաջնորդ Գեր. Ներսէս Եպիսկոպոս հրաժարած լինելով աթոռային առաջնորդութենէն, խառն ժողովը ընդուներ է նորա հրաժարականն և որոշեր է նոր ընտրութեան հրահանգ տալ, առաջնորդական ընտրելոց հնտաւեալ ցանկը պատրաստելով. Գեր. Գ. Ե. Վ. Ռուսճուքլեան, Արժ. Մազաքիա Վ. Տէրունեան, Վահան Վ. Յակոբեան։

Հրաժարական Ս. Պատրիարքի եւ ընտրութիւն Տեղապահի. — Վեհ. Սուլթանն ընդուներ է Տ. Յարութիւն Արքազանի հրաժարականն ի Պատրիարքութենէն կ. Պոլսոյ և վաւերացուցեր է Ն. Սրբազնութեան ընտրաւաղէմի Պատրիարքութեան ընտրութիւնն և միանգամայն հրամայեր է Տեղապահ մը կարգել ընտրութիւն նոր Պատրիարքին։ Ըստ այսմ խառն ժողովը ի նիստ գումարուելով և Տեղապահի ընտրութեան ձեռնարկելով՝ քուէից մեծամասնութեամբ Տեղապահ ընտրուեցաւ Գեր. Սիմէոն Եպիսկոպոս Սեֆէրեան՝ 13 քուէով, քուէարկուաց թիւը լինելով 19։

Ցուցարիւն բարգմանութիւնք Մկրտութեան եւ Ս. Պատարագի. — Յայտնի հայագէտ Տիմիդրիոս Զալաքիոգլս էֆէնտի, որ ասկէ առաջ հրա-

տարեկան եր Հայաստանեայց Եկեղեցւոյ Մկրտութեան խորհրդոյն յունարէն թարգմանութիւնն, այս օրերս հրատարակած է նաև Հայ եկեղեցւոյ Ս. Պատարագին յունարէն թարգմանութիւնն, «Ἀβραμιαῖον Ἐκκλησιαστικὸν Πατριαρχεῖον Ἀρμενικῆς Ἐκκλησίας» անունամբ, տալով բաւական կարևոր ծանօթութիւններ իր թարգմանութեան այլ և այլ մասերուն։ Կրօն. ծողովը քննելով այս թարգմանութիւնն՝ ընդգրկեն յար և նման գտեր է զայն։ Չոլաքիտէս էֆ. սոյն թարգմանութեան վերջը գրած է եղեր Յովակիմ Գ. Պատրիարքին կոնդակն՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մկրտութեան խորհրդոյն յունարէն թարգմանութեան վրայ, յոյն լրագրաց խմբագրականները նոյն աշխատութեան առթիւ և Հանդուրեակ Տ. Ղրիղորիոս Հայասէր Եպիսկոպոսին՝ Հերակլիոյ Թեարապոլիին՝ մէկ նամակն հայ Եկեղեցւոյ ուղղափառութիւնն ապացուցանող։

Արեւելք եւ իր կաթողիկոսը։—Ինչպէս ու նկատի վերնագրով Երևանէն գրուած և Ց. Աճառեան ստորագրութեամբ յօդուած մը կը հրատարակէ Աւետիս (յունիս 25), յորում յօդուածագիրն յիշելէ յետոյ՝ թէ էջմիածնայ մէջ կատարուելիք ներդրութեանց առթիւ Մակար կաթողիկոսն դիմեր է կովկասի կուսակալ Տօնտուկով Գօրսաքով իշխանին, որպէս զի թոյլտուութիւն տայ Ս. Օշականցւոյ լուսնէն ձրիաբար փայտ կտրել և թէ կուսակալն անպատասխանի թողեր է նորա խնդիրքն, կը բացադատե Ներսէսի և Գէորգի ժամանակուան կաթողիկոսութեան փաստաւոր վիճակն արդի նուաստ և անկարող վիճակին հետ և ապացուցանէ զայն կ'ըսէ՝ որ եթէ վերոյիշեալ կաթողիկոսներն կարողացան շինել դպրոցներ, ճեմարաններ, լիճեր և տնկել շահաբեր անտառներ ու մրգատունկներ, պատճառն այն էր որ Ռուքա կը վայելէին բովանդակ Հայութեան սէրն ու աջակցութիւնը. իսկ Մակար՝ Ազգին կամաց հակառակ կաթողիկոսացած և օտարին ձեռքը կամակատար գործիք դարձած, չկրնալով վստահիլ իր Ազգին աջակցութեան, կը դիմէ օտարին օգնութեան, բայց և օչ իսկ պատասխանի կ'արժանանայ։ Ի՜նչ մեծ պատիւ Աբէլեան և Փոռատեց։

Ընտրող. ծողով։—Ի լրոյ կ'իմանանք որ տեղւոյս երեսփոխանական քննութեանց վրայ հակող Ընտրող. ծողովը ընտրութեան ժամանակ զանազան անկանոնութիւններ և խարդախութիւններ նշմարած լինելով, համեմատականի վերաբերեալ ընտրութիւնն չէ ուզեր շարունակել և իր Տեղեկագրով մատուցեր է Ազգ. վարչութեան իր հրաժարագիրն։ Այս մասին աւելի մանր տեղեկութիւններ պիտի տրուին երբ պաշտօնական տեղեկութիւններ ծանուցուին։

Հովհաննէս Տէրոյենց, Զամուռեան պատուելի, յետ կարճատև հիւանդութեան ի հասակի 88 ամաց կ'իջեր է իր մահկանացուն ամսոյս 23-ին. յուղարկաւորութիւնն կատարուեր է վայելուչ և արժանավայել շքով և մարմինն ամփոփուեր է Խոսիւտարի դերեզմանատան մէջ։

Սուրճանգակ անուամբ ազգային և գրականական շաբաթաթերթի մը սկսած է հրատարակուիլ խմբագրութեամբ Տիրան էֆ. Փափազեանի։ Սուրհանդակ որոյ առաջին անունն էր Հնչակ և որոյ առաջին թիւը միայն հասած է մեզ, իր պարունակութեամբ առաւելութիւններ ունի նախորդին վրայ։ Ի բարոյ յաջողութիւն կ'մաղթենք։

Ամաօրեայ Հանդէսի յուլիս ամսաթիւն հրատարակուեցաւ. բովան-

գակութեան մէջ նշանակելի են Տ-ոբոբչ-ութեան Խոյր, քնդարձակ և հըմտալից ուսուցչասիրութիւն հայ տարիք արտասանութեան մասին. — Բրջ. Հէ-ղէնէ կարծիքն՝ Ռուսահայ արտասանութեան վրայ. — Հէրոզոտոսի-ութեան Նախնեաց ոճերէն վրայ. — Ռուսահայոց գրականութիւնը, համառօտ կենսագրութեամբ և երկասիրութիւնք Ռուսահայ թատերագիր Գաբրիել Սունդուկեանցի. — Մոդեռնախօսութիւն, քննադատութիւն փրկտ. Միլլէրի ի վերայ Պատմութեան Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց և Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան սիեզերական Պատմութեան:

Խիկար հանդէսի Մայիսի ամսաթիւն կ'պարունակէ ի մէջ այլոց քաղաքականութեան ընտրէը, աքանչելի նկարագիր շատախօս և գլխացաւ անձերու. — Աղէտն գեսդեմոնէ, առն և կնոջ մէջ պատահած ամենէն անմեղ կռիւը որոյ առիթ կ'տայ իրենց չարաճճի այլ պաշտելի զաւակին. այս կռուի նկարագրութեան մէջ ընտիր դասեր կ'տրուին ծնողաց՝ իրենց զաւակաց հետ վարուելու եղանակին վրայ. — Գրախօսութեան յատ կ'տէրէ, երգիծական սուր դիտողութիւնք լրագրութեան և գրականութեան մէջ ստէպ գործածուած ֆոխաբերական անճահ և անշահ սասպուածոց վրայ:

Ն.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

Անուզելի մարտանաւ մը. — Ֆրանսական կառավարութիւնն նոր մարտանաւ մը շինել տալէ վրայ է, մարտանաւ՝ որ կ'կարծուի թէ լիակատար յեղաշրջում մը պիտի գործէ նաւաշինութեան մէջ: Անուզելի պիտի լինի այդ նաւն և կ'ըսուի թէ՝ երբ որ ամեն կողմէ գնդակներով խոկ ծակուի՝ իր ծփման զօրութիւնն չպիտի նուազի: Այս յաջողութիւնը ձեռք պիտի բերուի գործածելով իր շինուածքին համար Սեւէսթ ոմպէ, ամերիկեան նշենուց թելլատ մանր որ սիմքան առձգութիւն ունի որ եթէ գընդակէ կամ նաւու մը քթին կամ ժայռէ մը ծակծկի՝ բացուած ծակն իսկոյն կ'գոցուի: Այս նոր նիւթը պիտի կազմէ նաւուն կողերն, ունենալով միայն պղպջատ խիտ հատ կամարք և բրգաձև աշտարակ նաւապետին և դեկավարին համար: Հնարողին նպատակն այս է որ եթէ նաւազն սպանուի կողերէն անցնող գնդակներէն՝ նաւը ծովասոյզ չլինի, այլ ուրիշ օգուտ համար մարտի պատրաստուի, յատկութիւն որմէ զուրկ են արդի երկաթապատ մարտանաւերը:

Անգլիոյ մէջ Հրէայք 100,000ի կ'մանին: 70 հազար ի Լոնտոն, 25 հազարի մօտ Մանչեսթեր, Լիվրբուլ, Լիտս և Պիրմինկեմ. 1500 Սկոտիա և միայն 1000 հոգի Իրլանտա. մինչդեռ անգլիական գաղթականութեանց մէջ 15ն 20 հազարի կ'հաշուի:

Պ. Զօլաի յաջողութիւնը. — Ն'պատմուի թէ Պ. Զօլա արգէն 150-000 ոսկի շահած է իր վէպերու շնորհիւ: Անհաւատալի կ'թուի այս վաստակն այն ժողովրդոց որոց մէջ գրողներն օրն օրին կ'ապրին:

ԲԱՂԱԲԱԿԱՆ

Եւրոպայի և Թերևս Արևելեան ժողովրդոց ճակատագրին վրայ այժմ առաւելապէս կռիւ ունեցող պետութիւն մը, Գերմանիա՝ գրաւած է, մանաւանդ մի քանի ամէ ի վեր իր մէջ պատահած զանազան քաղաքական դիպաց պատճառաւ, մեծ Տէրութեանց ուշադրութիւնը։ Ծերունի Ուիլհելմ կայսեր մահն, իր յաջորդին Ֆրէտերիկ Գ-ի դառնագէտ հիւանդութիւնն ու վախճանն, դահաժառանգ Ուիլհելմ Բ-ի դահակալութիւնն շաբունակ յուզման մէջ պահեցին սիրտերն ու միտքերն և տեղի տուին այլ և այլ լաւատես և յոռետես դուշակութեանց տպաւորութեանց։ Ֆրէտերիկ կայսեր մեծ հոգին, դերազնիւ բնաւորութիւնն, աշխատական տրամադրութիւններն, մարդասիրական անզուսպ ղգացմունքն նոր, արդար, իրաւասէր քաղաքականութեան մը թռւականը բանալու երաշխաւորութիւններ էին։ Եւ արդարև՝ իր կարճատև իշխանութեան ժամանակ ցոյց տուաւ թէ՛ բանիւ, թէ՛ գործով և թէ իր քաղաքական ծրագրով իր հոգւոյն վեհութիւնը, մարդկային ազգի համար տածած սէրն, և եսական, անձուկ դիւանագիտութեան և տապալտիր ճնակերպութեանց դէմ՝ ունեցած անհուն արհամարհանքը։ Թէև ինք անյոյս և դրեթէ անչունչ իր մահուան անկողնոյն մէջ, չատ աւելի երանութեան յոյսեր ներշնչեց, չատ աւելի ազատութեան չունչ ազդեց այն ժողովրդոց որ Եւրոպա և այլուր բռնասէր և չահամոլ դիւանագիտութեան և օրէնդրութեան երեսէն կ'տատասին, քան թէ այն քաղաքագէտներն ու օրէնսդիրներն որ կորովի և կենդանի մտայ սէր կը համբաւուին, և որ սակայն իրենց անամէջ և ուռուցիկ յայտագիրներու և ծրագիրներու չնորհիւ զիրար և ժողովուրդները կ'խաբեն։ Ոչ միայն Գերմանիա, այլ բոլոր աշխարհ կորոյս Ֆրէտերիկ կայսեր մահուամբ մեծահոգի անձնաւորութիւն մ'որ մարդկութեան չահերն, ազգայ բարոյական, մտային և նիւթական յառաջդիմութեան անձուկներն չատ աւելի վեր կ'դասէր քան թէ դիւանագիտական անձուկ հաշիւներ և երկբայական ձխտումներ։ Եթէ նա ապրէր, ինչպէս կ'հաստատեն եւրոպական արժանահաւատ թերթեր, պիսմարքը անշուշտ այն երկաթէ չրջանակն որ կ'պարփակէ գերմանականին պէս մեծ Ազգի մ'իմացականութիւնն և հոգին՝ չէր ողով որ թշուառ մարդկութեան վրայ տարածեն իրենց սրկաւէտ ազդեցութիւնը։ Գերմանիա այսօր կ'տիրապետէ իր քաղաքական և պատերազմական հանճարով, բայց այդ կրկնեակ զօրութիւնն սահմանափակ և անկայուն պիտի մնայ ցորչափ ժողովրդոց ազատութեան

և համակրութեան մէջ չենակ մը չգտնէ։ Այսօր Ուիլհելմ Բ կայսր կ'գահակալէ, հոլս աշակերտ Պիզմարդ իշխանին և հարազատ ծնունդ Մոլդքէի դպրոցին, խրոխտ ու ճիգ դինուորական մ'որ աշխարհիս վրայ քան ամեն ինչ կ'սիրէ սաղաւարտն ու սուրը, այնպէս որ իր գահակալութիւնը փոքրորկալի լինիլ կը. կարծուէր։ Սակայն իր կայսերական առաջին ճառին մէջ ցրուեց միտքերը պաշարող մութ ամպերն, խոստանալով հետևիլ իր հարց չաւղին, յարգել դաշնադրութիւններն ու դաշնակիցներն և Եւրոպայի խաղաղութիւնն անվրդով պահելու չանալ, ցորչափ Գերմանիա յարձակում չկրէ։ Սակայն Ռուսիոյ կայսեր հետ, բարեկամական յարաբերութիւնները մշակելու համար, ընելիք տեսակցութիւնն նորանոր ենթադրութեանց և անհանգստութեան առիթ կ'լինի։ Պիզմարդ իշխանին մտահոգութեան առարկան է Ֆրանսան, կզգիացնել Ֆրանսան, այս է մեծ քաղաքագիտին նպատակն. բայց մինչև ե՞րբ, և ինչ զոհողութեամբ. թերևս տալով Ռուսիոյ այն գերիշխանութիւնն, որու անդուլ կ'ձկտի, արևելեան ազգաց վրայ և ի մասնաւորի Պուլկարիոյ վրայ։ Եւ միթէ Աւստրիա պիտի հանդուրժէ՞. միթէ երբեակ դաշնակցութիւնն պիտի խորտակուի՞։ Երկու մեծ խնդիրներ՝ մին Ալզաս–Լորէնի և միւսն՝ Պուլկարիոյ, ծնայուն սպառնալիք են սակայն Եւրոպայի և Արևելքի խաղաղութեան դէմ։ Եթէ դիւանագիտութեամբ հնար լինի լուծել մին, անտարակոյս դիւնուք պիտի վճռուի միւսն, և դիւանագիտութեան չինած խարխուլ չէնքն ալ պիտի կործանի։ Ֆրանսա այս գիտնալով անդադար կ'սպառազինի, գիտութեան հնարքն իր զինուց կատարելագործութեան համար կ'գործածէ, ինչպէս նաև միւս տէրութիւններն, մինչդեռ ժողովուրդներն չարունակ իրենց աչխատութեան արդեանց մի մասն բանակներ, այսինքն անգործ մարդիկ, կանգուն պահելու համար կ'սպառուն։ Իսկ Անգլիա անջուք դեր մը կ'կատարէ առ այժմ միջազգային այս կնճիռներուն մէջ և ինչպէս իր ներքին դինուորական և նաւային դիրքն ամրացնելու, նոյնպէս իր կացութիւնն՝ ի Հնդկաստան, որու միայն կ'սպառնայ Ռուսիա, ապահովելու համար ապագայ քաղաքական պատահարներու դէմ, նոր միջոցներու կ'դիմէ։ Տկարութեան ոչ նուազ ծանր տարրներ են Անգլիոյ և Ֆրանսայի մէջ յուզուած ընկերային և քաղաքական խնդիրներն ու կուսակցական երկպառակութիւնները։ Պ. Կլատսդօն Բարնէլեանց հետ արդի պաշտօնէութեան դէմ կ'մղէ, ի նպաստ իրլանտական ինքնօրինութեան, սպայքար մ'որու յաջողութեան, ամեն հաւանականութեանց դէմ, կ'յուսայ, և վերջերս Բարլմէնդէն անվստահութեան քուէ մը կորզելու համար, լրտ Սալզպըրիի ներքին քաղաքականութեան մասին, ըրած փորձն ապարդիւն կընայ։ Իսկ Ֆրանսայի արդի պաշտօնէութիւնն ևս անկայուն վիճակ ունի, թէև ջերմաւար Պուլանժէի աստղը մարելու վրայ է։ Այս ներքին յուզմունքը պատճառ մը չեն սակայն Պաղկիլի առաման և կործանման տարեդարձը (14 յուլիս) տօնելու համար

արտասովոր պատրաստութիւններ տեսնելու, վասն զի Ֆրանսական մեծ Ազգն, ի բաց առնալ կղերամիտ և թագաւորական կոտորակային մասերն, իր ամեն ներքին անհամաձայնութիւնները կ'մոռնայ, երբ մեծ յեղափոխութեան կենսատու սկզբունքըն ոտնելու ժամն հնչէ։ Ոչ նուազ հետաքրքրաշարժ է Միացեալ–Նահանգաց մէջ մղուած նախագահական ընտրութեան պայքարը։ Պ. Պլէյն, թէև ասպարէզէն քաշուած, հասարակապետական կուսակցութեան կողմէ իրրև ընտրելի կ'հռչակուի և փորձ կ'փորձուի Շիկագոյի դաշնադրական Իողովին քուէներն ապահովել անոր համար, այլ ի զուր։ վասն զի այն ժողովն իրրև ընտրելի կ'ընդունի Պ. Հէյրիսըն, համանուն հին նախագահի մը ազգականն, որ թէև չէ հանրածանօթ, սակայն կ'կանգնի ոտոխ՝ հանրավարականաց ընտրելի, արդ ի նախագահ Պ. Ֆիլիվլէնտի, որու կշիռը մեծ է և, ըստ երևոյթին, պիտի վերընտրուի։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՄԱՆԵԱԿՆ։ — Աղէքսանդր Տիւմայի, 4 հատոր, ամբողջովին թարգմանուած՝ ի ձեռն Մեծ. Բիւզանդի Մ. Գօզաճեան, և հրատարակուեցաւ Մեծ. Ց. Գրիստոփորեանի։ ի Տպարանի (Ա. Մավեան) Հայ—գրաշարաց Ընկ. գին 48 դահեկան ոսկի։

ՄՈՆԹԻ—ՔՐԻՍԹՈՅԻ ՈՐԴԻՆ։ — Գործ ժ. Լէտմիայի շարունակութիւն կամ ոչ Մոնթի—Քրիսթի վէպին։

Այս վէպին առաջին հատորը հրատարակուած է 1886ին, և ապա զանազան ձախող պարագայից պատճառաւ ընդմիջուած։ Այս անգամ Մեծ. ՋԱՐԵՀ ԷՖ. ԹՈՐՈՍԵԱՆ՝ ծանր ղեկղեկութեամբ վերստին ձեռնարկած է շարունակել վէպին հրատարակութիւնն, թարգմանութեամբ Մեծ. ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆԻ, և արդէն երկրորդ հատորը լոյս տեսած է և մնացեալներն ալ հետզհետէ պիտի հրատարակուին մինչև 6րդ հատորն։ Բաժանորդագինն է բոստի ծախքով 70 դրուշ. հատորին գինն 10 դրշ. ոսկի։

Մեծ. Զ. Թորոսեանի այս ձեռնարկը արդարև քաջալերութեան արժանի է։ փափաքողք կրնան դիմել Աւետեաց Մատչ տպարանն և բաժանորդ գրուիլ կամ զատ զատ հատորները գնել։

Խմբագիր–Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ